



ՄԵՐ ԱՆԿԻԻՆԵՆ

Սփիւռքի Նախարարութեան ճակատագիրը

Այս օրերուն Հայաստանի եւ սփիւռքի մէջ քննարկուող հրատապ հարց դարձած է Սփիւռքի նախարարութեան հետագայ ճակատագիրը:

Պիւտճէի խնայողութեան ակնկալիքով Կառավարութիւնը կը պատրաստուի կրճատելու հինգ նախարարութիւններ, որոնցմէ չորսը պիտի միանան այլ նախարարութիւններու, իսկ Սփիւռքի նախարարութեան մասին առ այժմ ծանօթ է միայն այն, որ նախարարութիւնը պիտի լուծարուի: Իսկ, թէ ի՞նչ նոր կառոյց պիտի գայ փոխարինելու զայն, առ այժմ յստակ չէ:

Սփիւռքի նախարարութեան լուծարումը բնականաբար պիտի յառաջացնէր հակազդեցութիւն եւ Հայաստանի եւ սփիւռքի տարածքին: Սփիւռքի մէջ, նախարարութեան լուծարման հարցով կը հնչեն տարբեր տեսակետներ: Ոմանք կը խորհին թէ, նախարարութիւնը իր գոյութեան ընթացքին ու ներկայ կառուցումներով եւ իրագործած ծրագիրներով չէ արդարացուցած անոր վրայ դրուած յոյսերը: Ուրիշներ մտահոգուած են, որ նախարարութեան լուծարումով Հայաստան-սփիւռք կապերը պիտի արժանանան նուազ ուշադրութեան եւ հոգատարութեան:

Հայաստանի Կառավարութիւնը տակաւին չէ յստակեցուած իր ծրագիրները՝ սփիւռքի հետ յարաբերութիւնը կարգաւորող նոր կառոյցի շուրջ: Խօսակցութիւններ կան, որ նման մարմին մը կրնայ ստեղծուիլ վարչապետի եւ կամ Հանրապետութեան նախագահի կից, այդպիսով հայաստան-սփիւռք կապերը դնելով աւելի բարձր մակարդակի վրայ ու առաւելագոյնս օգտագործելով սփիւռքի ներուժը՝ Հայաստանի զարգացման գործին մէջ: Ասոր կողքին կայ նաեւ հայրենադարձութեան հարցի շուրջ յստակ եւ երկարամեայ ծրագիրներու մշակումի հարցը, որ կը կարօտի վերադաս մակարդակի քննարկումներու:

Այս բոլորի մէջ կայ նաեւ հարցի մարդկային երեսը: Միացուող կամ լուծարուող նախարարութիւններու որոշ թիւով պաշտօնեաներ պիտի կորսնցնեն իրենց աշխատանքը: Հայաստանի պարագային, ուր գործազրկութիւնը մեծ տոկոս կը կազմէ, պետական պաշտօնեաներու ազատ արձակումը մտահոգիչ պարագայ մըն է, որ կը կարօտի լուծումներու: Կը յուսանք, որ Հայաստանի Կառավարութիւնը շատ լրջօրէն կը մօտենայ այս հարցին եւ հետագայ որոշումներու ընթացքին յատուկ ուշադրութեան կ'արժանացնէ ընկերային այս կարեւոր հարցը եւս:

«ՄԱՍԻՍ»

«Աշխարհին Պէտք է Աւելիով Տեղեկացնել Ղարաբաղի Հարցի Էութեան Մասին». Փաշինեան

Ամանորի առթիւ Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան ներս տեղի ունեցած տօնական ընդունելութեան ընթացքին վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեան յայտնած է որ, յառաջիկային մեծագոյն հարցը միջազգային հանրութեան մօտ Ղարաբաղի հարցի էութեան վերաբերեալ տեղեկացուածութեան բարձրացումն է, շեշտելով որ, այդ հարցը ունի ազգային անվտանգութեան նշանակութիւն:

«Մենք պէտք է համոզուած լինենք, որ աշխարհում միջազգային հանրութիւնը Ղարաբաղի հարցը ընկալում է հենց այնպէս, ինչպէս նա կայ իր էութեան մէջ: Ցաւոք սրտի, մենք այսօր նման արձանագրում մտնելու եւ ամենուր չէ, որ կարող ենք անել, եւ պէտք է այս ուղղութեամբ շատ լուրջ աշխատել», - ըսած է Փաշինեան:

2019 թուականի համար Նիկոլ Փաշինեան նշած է մէկ այլ կարեւոր հարց՝ Հայաստանի նոր դիմագիծի օգտագործումը երկրէն ներս ներդրումային գործունէութիւնը:



Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ Արտաքին Գործոց Նախարարութեան ընտանեկութեան ընթացքին: Կողքին՝ նախարար Զոհրապ Սնացականեան

Խթանելու համար, շեշտելով, որ այդ գործին մէջ դիւանագիտական ներկայացուցիչներու դերը շատ մեծ է: Ան ընդգծած է, որ ամբողջ աշխարհի մէջ տեղի կ'ունենայ Հայաստանի դիմագիծի կարեւոր

փոփոխութիւն, որ սկսաւ Մայիսին եւ զագաթնակէտին հասաւ Դեկտեմբեր 9-ի տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրու-

Շար.ը էջ 5

Աճած է Հայաստան Այցելած Զբօսաշրջիկներու Թիւը



Օտար զբօսաշրջիկներ Հայաստանի մէջ

2018-ի առաջին ինը ամիսներու ընթացքին նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ Հայաստան այցելած զբօսաշրջիկներու թիւը աճած է 8,8 տոկոսով:

Զբօսաշրջութեան կոմիտէի նախագահ Հովհաննէս Գրիգորեան այս մասին տեղեկացնելով ըսաւ, - «Թուային առումով կազմել է մէկ միլիոն 275 հազար 209 այցելու: Շատ կարեւոր եւ հետաքրքիր տուեալ է հիմնական թիրախային շուկաների ներկայացումը՝ մեր դէպքում, բնականաբար, մեր հարեւան երկրներն են, բայց առաջին հերթին Ռուսաստանը՝ 525 հազար 423 զբօսաշրջիկն այցելու, Վրաստանը՝ 233 հազար 125, Իրանը՝ 132 հազար 829, ԱՄՆ-ը՝ 46 հազար 138

եւ Ուկրաինա՝ 24 հազար 308: Սրանք ամենամեծ զբօսաշրջային հոսքը ապահովող առաջին հինգ թիրախային երկրներն են»:

Վերջերս Նիկոլ Փաշինեան Ֆէյսպուքի վրայ գրառում կատարած էր՝ ըսելով, որ Ամանորին ուուսաստանցի զբօսաշրջիկներու հոսքը դէպի Հայաստան նախորդ տարուայ համեմատ կ'աւելանայ 76 տոկոսով. - «Եւ ընդհանրապէս՝ ուուսաստանցիների թիւ 1 ամանորեայ ուղղութիւնը Հայաստանն է՝ հսկայական առաւելութեամբ: Սա, իհարկէ, շնորհ է բազմաթիւ հայաստանցի գործարարների համար՝ իրականացնելու իրենց բաժին տնտեսական յեղափոխութիւնը եւ ամառային աւելի մեծ տուրիստական բումի համար ամուր հիմքեր ստեղծել»:

Կարօ Փայլանին Պատգամաւորական Անձեռնմխելիութիւնէն Զրկելու Միջնորդութիւն Ներկայացուած է Թուրքական Խորհրդարան

Թուրքիոյ նախագահական պալատը միջնորդութիւն ներկայացուցած է երկրի խորհրդարան՝ 8 պատգամաւոր անձեռնմխելիութիւնը վերցնելու պահանջով:

«Էրմենիհայեր» կը տեղեկացնէ, որ խորհրդարանի սահմանադրական եւ արդարադատութեան խառն յանձնաժողովին ներկայացուած յիշեալ միջնորդութեան մէջ 8 պատգամաւորի անունանցանկին վրայ է նաեւ քրդամեա ժողովուրդներու Դեմոկրատական Կուսակցութեան (HDP-ԺԴԿ) Տիրապէքիրէն ընտրուած հայ պատգամաւոր Կարօ Փայլանի անունը:

Մնացեալ 7 հոգիներէն 5-ը եւս նոյն կուսակցութեան անդամներ են: Ցուցակին վրայ զարմանալիօրէն յայտնուած է նաեւ Թուրքիոյ նախագահ Ռեջեփ Էրտողանի գլխաւորած իշխող «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութեան պատգամաւոր Ռեզա Փոսաշըն է: Իսկ 8-րդը Թուրքիոյ գլխաւոր ընդդիմադիր ուժ նկատուող «Ժողովրդահանրապետական» կուսակցութիւն (CHP-ԺՀԿ) պատգամաւոր Եուքսել Մանսուր Բըլըչն է:

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Գործող Օրենսդրութեան Պատճառով Խախտուում է Իշխանութիւնների Տարանջատման Սկզբունքը՝ Նրա Ճիւղերի Զաւասարակշռութիւնը

ԱՆԱՆԻԱ ՄԱՂԱՔԵԱՆ

Ապրիլեան թաւշեայ յեղափոխութիւնը փոխեց իշխանաւորներին, սակայն մնացին այն նոյն համակարգերը, որոնք չարմարեցուած եւ ծառայում էին նախկին իշխանութիւնների նպատակների իրականացմանը: Սկսեց չափազանց կարեւոր, թարմ, վերջին ժամանակների ամենակարեւոր իրադարձութիւնից՝ Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւններից: Գործող ընտրական օրէնագիրքը բազմապիսի անհամապատասխանութիւններ ունէր թաւշեայ յեղափոխութեամբ իշխանութեան եկած ուժի քաղաքական մօտեցումների եւ սկզբունքների հետ, որոնք ցաւօք ոչ մի կերպ չյաջողուեց յաղթահարել. մասնաւորապէս չփոխուեց գործող ընտրական օրէնագիրքը:

Չխորանալով այդ օրէնագրքի բազմաթիւ խուճեղի մէջ, նշենք միայն, որ Հայաստան երկրի այսպիսի սոցիալ տնտեսական պայմաններում, օրէնագրքում առկայ Դոնթի բանաձեւը պարտադրում է, որպէսզի ԱԺ-ի վերջին արտահերթ ընտրութիւններից յետոյ այն կազմուած լինի թուով 132 պատգամաւորներից, որը մեր նման աղքատ ու փոքր երկրի համար սարսափելի ճոխութիւն է: Հասկանալի է, որ օրէնքը գերակայ է եւ այդ 132 թիւը ոչ թէ ցանկութեամբ, այլ օրէնքի պահանջ է: Բայց միեւնոյն ժամանակ, Հայաստանի բիւջէն չափազանց աղքատիկ է եւ եթէ դրան էլ աւելացնենք, որ կան բազմաթիւ ու բազմապիսի չլուծուած խնդիրներ, որոնք բոլորն էլ չափազանց կարեւոր են եւ դրանցից ամենակարեւորը Ղարաբաղեան պատերազմի չլուծուած թնջուկն է, որոնք բոլորն էլ իրենց հերթին նաեւ շատ մեծ ծախսեր են պահանջում, ապա կոչրին անգամ տեսանելի է, որ 132 պատգամաւորի ստանալիք բարձր աշխատավարձերը չափազանց մեծ բեռ են մեր մատնաչափ բիւջէի վրայ: Ես միշտ այն կարծիքին եմ եղել, որ մեր նման փոքր երկրին

լիուլի բաւարար է նոյնիսկ մինչեւ 30 պատգամաւոր ունեցող Ազգային ժողովը: Հարց է առաջանում, արդեօք հաշուարկուե՞լ է, թէ ինչ ծաւալի օրէնսդրութիւն է պէտք մշակել Հայաստանի համար, որն էլ պէտք է իրականացուի այդքան մեծ թուով մարդկային ռեսուրսներով. 132 պատգամաւոր, պլյուս ամէնքը երկուական օգնականներով ու չկոնկրետացուած թուով մշտական յանձնաժողովների ու խմբակցութիւնների փորձագէտներով: Կարծում եմ, նման հաշուարկ Հայաստանում երբեք էլ արուել ու այսօր էլ չկայ:

Այլ բան է, եթէ օրինակի համար ասենք իշխանութիւններն իրենց համար գերակայ սկզբունք են հռչակել, որ 132 մարդ իրենց օգնականներով ու փորձագէտներով աշխատանք, ծառայողական մեքենաներ, կաբինետներ եւ այլ յարմարութիւններ ունենան, որպէսզի աշխարհին ցոյց տան, թէ տեսք մենք ինչքան հզոր երկիր ենք, որ ասենք 30-ի փոխարէն պահում ենք 132 հոգանոց Ազգային ժողով, որն էլ ըստ իրենց կը նշանակի, որ այդ երկրները պէտք է հաշուի նստեն Հայաստանի հետ: Այս մօտեցումն անհասկանալի է այնքանով, որ փաստացի Հայաստանը մինչեւ այժմ գոյատեւում է այդ նոյն երկրներից ստացուող օգնութիւնների եւ վարկերի միջոցով, հետեւաբար նրանց ցոյց տալու, առաւել եւս զարմացեալու որեւէ խնդիր չկայ: Հասկանում եմ, որ կարող են ինձ մեղադրել, ասելով. այ ընկեր, որ ընտրական օրէնագիրքն է այդպէս պահանջում, մենք ինչ կարող ենք անել:

Որ Հայաստանի գործող կառավարութեան կառուցուածքում եւս առկայ պետական կառավարման մարմինների քանակը ու նրանցում ընդգրկուած աշխատակիցների թուաքանակները բաւականին ուռճացուած են եւ չեն համապատասխանում երկրի համար պահանջուող եւ իրականացուող կոնկրետ աշխատանքների ծաւալներին, դա եւս ակնյայտ է, այնպէս որ փոխանակ օպտիմալացնելու կառավարութեան կառուցուածքը՝

կրճատելու ու միացնելու որոշ պետական կառավարման մարմիններ ու ըստ անհրաժեշտ աշխատանքների փաստացի ծաւալների, հապէս կրճատելու նաեւ այդ մարմինների աշխատակազմերը, ընդհակառակը 30-ից աւելի տոկոսով աւելացում է Ազգային ժողովի պատգամաւորների թուակազմը, որը կրկնում եմ սարսափելի մեծ բեռ է դառնալու մեր սուղ բիւջէի վրայ /իհարկէ, վարչապետ պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը կառավարութեան կառուցուածքի օպտիմալացման ուղղութեամբ որոշակի կոնկրետ քայլեր է ձեռնարկել եւ յուսանք, որ գոնէ դրանք կ'իրականանան/: Ամէն դէպքում, եթէ հաշուի առնենք նաեւ Հայաստանում գործող առկայ դատական համակարգը, որը բացի համարեա հին ձեւով աշխատելուց, ժամանակային կտրուածքով հիմնականում ուշացնում է դատական հայցերի լուծմանը /ըստ դատաւորների բարձրաձայնումների, եղած դատաւորների թուաքանակի ու ներկայացուող դատական հայցերի թուաքանակների միջեւ խիստ անհամապատասխանութիւն կայ, այսինքն՝ դատաւորների թուաքանակն է հապէս փոքր է նման քանակի դատական հայցերը ժամանակի լսելու համար, որի պարագայում խնդրի լուծումը նրանք տեսնում են դատաւորների թուաքանակի հապէս աւելացման մէջ/, ապա պարզ կը դառնայ, թէ ինչ էական՝ նաեւ մարդկային ռեսուրսների անհամապատասխանութիւն՝ անջրպետ կայ իշխանութեան այդ երեք ճիւղերի միջեւ, քանզի միայն հաւասարազօր մեծութիւնները կարող են միմեանց հաւասարակշռել: Եւ այս ամէնը պարզորոշ տեսնում է նաեւ մեր իմաստուն ժողովուրդը, ով շարունակական հիասթափութիւններ է ապրում, քանզի լաւ հասկանում է, որ իշխանութեան ճիւղերի միջեւ առկայ այդ անհաւասարակշռութիւնը միմիայն ճաքեր է առաջացնելու իշխանութեան այդ ճիւղերի միջեւ, որն անմիջականօրէն եւ առաջին հեր-

թին հարուածելու է հենց իրեն՝ նոյն ժողովրդին: Աշխարհի որեւէ երկրում ժողովրդավարութեան, ժողովրդին ծառայելու մասին խօսք լինել չի կարող, եթէ խախտուած է այդ հաւասարակշռութիւնը: Աշխարհը գիտականօրէն է հասել ու կիրառում այդ հաւասարակշռութիւնը, քանզի ժողովրդավարութեան հաստատման, երկրի բնականոն զարգացման եւ շատ ու շատ այլ պրոբլեմների յաղթահարման ու կայունացման համար մինչ այժմ այլ յարմար բանաձեւ չի գտել:

Ցանկացած երկրի ճիշտ եւ օպտիմալ կառավարման համար, որի հիմնական գրաւականը արդար ընտրուած ու նշանակուած՝ ճիշտ իշխանութեան ձեւաւորումն է, որի ամենակարեւոր գրաւականը այդ նոյն իշխանութեան երեք հիմնական ճիւղերի՝ օրէնսդիր, գործադիր ու դատական իշխանութիւնների հաւասարակշռութիւնն է, այլընտրանք ուղղակի չկայ, այնպէս որ նախքան Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւնների անցկացումը, այդ ժամանակուայ գործող իշխանութեան հիմնական խնդիրը՝ քաղաքական մօտեցումը պէտք է լինէր ապագայ իշխանութեան ճիւղերի միջեւ հնարաւոր հաւասարակշռութեան ապահովման բաղխի ճիշտ ձեւաւորումը, այլ ոչ թէ ճիշտ հակառակը. կը ձեւաւորուեն իշխանութիւնները եւ յետոյ միայն իրենք կը փորձեն հետագայում որոշակիօրէն հաւասարակշռել ձեւաւորուած իշխանութեան այդ երեք ճիւղերը: Պատկերաւորութեան համար նշենք, որ դա շատ նման է նրան, որ հիւանդին նախ վիրահատեն, յետոյ միայն տան հիւանդութեան ախտորոշումը:

«ԱՌԱՒՕՏ»

ՀԱՊԿ Գլխաւոր Քարտուղարի Պաշտօնի Շուրջ Հակասութիւնները Սպառնում են Աւելի Խորանալ

ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի պաշտօնի շուրջ այդ կառուցի անդամ երկրների հակասութիւնները սպառնում են աւելի խորանալ: Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն ստորագրել էր երկրի ԱԱՍՊ քարտուղար Ստանիսլաւ Չասին ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի պաշտօնում նշանակելու համապատասխան որոշման նախագիծը: Ու այս օրերին Չասը սկսել է հանդիպումների շարքը ՀԱՊԿ անդամ երկրների ղեկավարների հետ՝ միաժամանակ յայտարարելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանին հանդիպելու պատրաստակամութեան մասին:

«Ես պատրաստ եմ Հայաստանի վարչապետին յարմար ցանկացած ժամանակ մեկնել այնտեղ եւ հանդիպել նրա, Արտաքին գործերի եւ Պաշտպանութեան նախարարներին հետ, քննարկել այն հարցերը կամ խնդիրները, որոնք նրանք տեսնում են կազմակերպութեան գործունէութիւնում, եւ հետագա-

յում աշխատել նաեւ այդ խնդիրների ուղղութեամբ», - ասել էր նա:

Սակայն դատելով Հայաստանի պաշտօնական արձագանքից՝ հանդիպումը հազիւ թէ տեղի ունենայ գոնէ մօտ ապագայում: Վարչապետի խօսնակ Արման Եղոյեանը յայտարարել է, որ Փաշինեանը պատրաստ չէ այդ հանդիպմանը: «Եթէ մինչ այս պահը նրա հետ հանդիպում տեղի չի ունեցել, ուրեմն նման հանդիպման անհրաժեշտութիւն չի եղել», - ասել է Եղոյեանը:

Ենթադրուած է՝ Հայաստանը ՀԱՊԿ-ում նաեւ վեհօ կը դնի Չասի թեկնածութեանը, եթէ Բելառուսը պնդի իր ցանկութիւնը: Այդ դէպքում Բելառուսը փորձելու է օգտուել ՀԱՊԿ կանոնակարգում առկայ սողանցքներից ու որոշումները կայացնել առանց Հայաստանի: Չասը յայտարարել է, թէ ՀԱՊԿ կանոնակարգը նախատեսում է սահմանափակ ձեւաչափով որոշումների ընդունում, երբ ոչ բոլոր երկրներն են համաձայն այս կամ այն հարցի

շուրջ: «Բայց ես յոյս ունեմ, որ, ամէն դէպքում, կոնսենսուս կը լինի, եւ ներկայումս գոյութիւն ունեցող հարցերը կը հանուեն», - յաւելել է նա:

Ակնյայտ է, որ իրադարձութիւնների նման զարգացումը կարող է անցանկալի հետեւանքներ ունենալ. ի վերջոյ, եթէ Բելառուսը պնդի այս հարցն առանց Հայաստանի որոշելու ցանկութիւնը՝ օգտուելով կանոնակարգով նախատեսուած սողանցքներից, կարող է լրացուցիչ անգամ յարուցել հայկական կողմի գայրոյթը՝ լուրջ ճեղքուածք առաջացնելով կառուցի անդամ երկրների յարաբերութիւններում: Միաժամանակ, այդպէս անյարմար դրութեան մէջ կը յայտնուեն ՀԱՊԿ միւս երկրները, այդ թւում՝ ՌԴ-ն, առանց որի աշակցութեան ՀԱՊԿ-ում նման հարցերը չեն լուծուի: Եւ ուրեմն լաւագոյն լուծումը կարող է լինել ժամանակ ձգելը, մինչեւ աւարտուի ՀՀ-ին յատկացուած ժամկէտի աւարտը:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏԵՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՋԱՊԱՅԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Դեմ ենք Սփիւռքի Նախարարութեան Լուծարման». Յոյցին Մասնակցած ԵՆ Նաեւ Զայրենադարձները



Երեւանի մէջ ցուցարարներ կը բողոքեն Սփիւռքի Նախարարութեան լուծարման դէմ

«Դէմ ենք Սփիւռքի նախարարութեան լուծարման» պաստառներով խումբ մը հայրենադարձներ Սփիւռքի նախարարութեան աշխատակիցներու հետ երթով շարժած են դէպի կառավարութիւն:

Սփիւռքի նախարարութեան հայրենադարձութեան բաժնի պետ Յովհաննէս Ալեքսանեանը հիմնաւոր չի համարեր բացատրութիւնը, թէ միւս նախարարութիւններուն մէջ կան սփիւռքին վերաբերող բաժիններ, կ'ըսէ՝ անոնք միայն ոլորտային խնդիրներ կը լուծեն եւ քաղաքականութիւն իրականացնող մարմիններ չեն:

Կառավարութեան կառուցուածքի եւ գործունէութեան մասին օրէնքի փոփոխութիւններու համաձայն՝ Սփիւռքի նախարարութիւնը, ի տարբերութիւն վերակազմաւորուող միւս չորսին, պիտի լուծարուի:

«Քանի մենք սփիւռք ունենք, Սփիւռքի նախարարութիւն պէտք է ունենանք, եթէ չենք ունենայ սփիւռք, այդ նախարարութիւնը կը լուծարուի: Օփթիմալացման (կրճատման) մասին խօսք լինել չի կարող, որովհետեւ առանց այդ էլ Սփիւռքի նախարարութիւնը շատ փոքր կազմով է աշխատում: Հայրենադարձութեան բաժնի պետը ես եմ, այդ բաժինն ունի ընդամէնը երկու աշխատող՝ բաժնի պետ եւ

առաջատար մասնագէտ: Հարիւրաւոր ընտանիքներ են գալիս, այդ աշխատանքը կատարում է այդ փոքր բաժինը, իսկ վարչութիւնը ընդամէնը հինգ անդամ ունի», - ըսած է Ալեքսանեանը, շարունակելով. - «Մենք հասկանում ենք, որ որոշ կառուցուածքային փոփոխութիւնների կարիք կայ: Մենք ինքներս ենք հասկանում եւ մենք դրան դէմ չենք, մենք հարց ենք բարձրացնում՝ ո՞վ պէտք է համակարգի Հայաստան-սփիւռք յարաբերութիւնները, ո՞վ պէտք է իրականացնի հայրենադարձութիւնը, ո՞վ պէտք է հայապահպանութեան խնդիրը լուծի՝ էսօր սփիւռքում ձուլման խնդիրը արագացել է»:

«Մեր ծախսերը այնքան համեստ են, որ դա ուղղակի վէճի առարկայ չի կարող լինել: Նախարարութեան պահպանման ծախսը ընդամէնը 500 հազար տոլարին համարժէք է: Սփիւռքը այս տարիներին ընթացքում բազմաթիւ 500 հազարներ է Հայաստանին օժանդակել եւ նուիրաբերել: Դա ընդամէնը մէկ դպրոցի ծախս է՝ վերանորոգման կամ կառուցման: Մեր խնդիրը հիմնարկի գոյութիւնն է, կապ չունի՝ մենք այդ հիմնարկում կ'աշխատե՞նք, թէ՞ կը գան նոր, աւելի փրոֆեսիոնալ քատրեր: Հիմնարկի պահպանութեան հարցն է», - շեշտած է պաշտօնեան:

Այս Տեսքով Կառավարութեան Կողմէ Ներկայացուող Նախագիծին Դեմ Պիտի Քուէարկենք. Էտմոն Մարուքեան

«Այսպիսով, կառավարութիւնը, ըստ էութեան կը պահպանէ նախորդ վարչակարգի սուփեր-վարչապետական համակարգը, եւ նախագիծը այս տեսքով ԱԺ ներկայացուելու պարագային Լուսաւոր Հայաստան խմբակցութիւնը կը պատրաստուի ներկայացնել իր առաջարկները, որոնք չընդունուելու պարագային դէմ պիտի քուէարկէ նախագիծին»: Այս մասին ֆէյսպուքեան իր էջին վրայ գրած է Լուսաւոր Հայաստան կուսակցութեան նախագահ Էտմոն Մարուքեանը:

«Սիրելի քաղաքացիներ, համացանցում մի քանի ժամ առաջ հրապարակուել է ՀՀ կառավարութեան կառուցուածքի եւ գործունէութեան մասին օրէնքում կառավարութեան կողմից առաջարկուող փոփոխութիւնների նախնական տարբերակը: Նախագիծն ուսումնասիրութիւնից պարզ է դառնում, որ գործադիրը ծրագրում է փո-

փոխութեան ենթարկել հիմնականում նախարարութիւնների, ինչպէս նաեւ որոշ տեսչութիւնների կազմն ու կառուցուածքը:

Ուժային կառուցները (ոստիկանութիւն եւ ԱԱԾ), ինչպէս նախկին վարչակարգի օրօք, մնում են վարչապետի ենթակայութեան տակ: Այսինքն, խորհրդարանական վերահսկողութեան դաշտ այդ մարմիններն այդպէս էլ չեն տեղափոխուում եւ օրէնսդիր իշխանութեանը հաշուետու չեն դառնում:

Այսպիսով, կառավարութիւնը, ըստ էութեան պահպանում է նախորդ վարչակարգի սուփերվարչապետական համակարգը, եւ նախագիծն այս տեսքով ԱԺ ներկայացուելու դէպքում Լուսաւոր Հայաստան խմբակցութիւնը պատրաստուում է ներկայացնել իր առաջարկները, որոնք չընդունուելու պարագայում դէմ կը քուէարկի նախագիծին», գրած է Լուսաւոր Հայաստան կուսակցութեան

Փաշինեան. Մշակոյթի Եւ Սփիւռք Նախարարութիւնները Չեն Լուծարոււմ, Պարզապէս Վերակազմակերպոււմ ԵՆ

«Նախընտրական քարոզչութեան ընթացքում ես յայտարարել եմ, որ նախարարութիւնների թիւը պէտք է կրճատուի եւ ժողովրդից ստացել եմ մանդատ՝ այդ պրոցէսն իրականացնելու համար», - վառաձորի մէջ լրագրողներու հետ զրոյցի ընթացքին ըսած է ՀՀ վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը՝ անդրադառնալով Սփիւռքի եւ Մշակոյթի նախարարութիւնները լուծարելու դէմ բողոքի գործողութիւններուն:

«Ինձ անհանգստացուցին Մշակոյթի նախարարութեան ներկայացուցիչների արտայայտութիւնները, երբ նրանք ահազանգում էին՝ ասում են, որ մի կրճատէք, որովհետեւ մշակոյթը միշտ եղել է հայ ժողովրդի այցեքարտը: Դա շատ վատ ազդակ է: Այսինքն՝ մշակոյթի նախարարութիւնն իրեն հայ մշակոյթի հետ նոյնացնում է»:

Գլխաւոր Դատախազութիւնը Պիտի Բողոքարկէ Մանուէլ Գրիգորեանին Ազատելու Որոշումը

ՀՀ գլխաւոր դատախազութիւնը վերաքննիչ բողոք պիտի ներկայացնէ Մանուէլ Գրիգորեանին գրաւի դիմաց ազատ արձակելու վերաբերեալ առաջին ատեսանի դատարանի որոշման դէմ: Այս մասին յայտնած են Գլխաւոր Դատախազութեան:



Մանուէլ Գրիգորեանին ազատ արձակելու դէմ բողոքող քաղաքացիները Գլխաւոր Դատախազութեան մօտ

«Գլխաւոր Դատախազութիւնը ստացել է դատարանի որոշումը, այն հիմնաւոր չէ, եւ Դատախազութիւնը վերաքննիչ բողոք է ներկայացնելու դատարանի որոշման դէմ», - ըսած է ՀՀ գլխաւոր Դատախազութեան հանրային կապերու բաժնի պետ Արեւիկ Խաչատրեանը:

Մանուէլ Գրիգորեանին գրաւով ազատ արձակելու դէմ բողոքող քաղաքացիները բացին ժամեր շարունակ փակուած էջմիածին-Երեւան ճանապարհը: Անոնք կը պահանջէին դարձեալ կալանաւորել ազատ արձակուած գորավար Մանուէլ Գրիգորեանին եւ կոչումներէն զրկել անոր:

Բողոքողներուն հետ հանդիպած է էջմիածնի քաղաքապետ Դիանա Գասպարեան եւ յորդորած է բանալ ճանապարհը՝ նախատեսական օրերուն քաղաքացիներուն անյարմարութիւններ չստեղծելու համար: Միւս կողմէ ՀՀ վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեան յայտարարած է. «Մանուէլ Գրիգորեանի ազատ արձակումը ինձ էլ հաճելի չէ, բայց եթէ դատարանը կայացրել է հիմնաւորուած որոշում, այդ որոշումը պէտք է կատարուի»:

«Կառավարութիւնը ճշումներ չի գործադրում դատական համակարգի վրայ, բայց ես համոզուած չեմ, որ հին մեխանիզմներ չեն գործում, հին կապէր եւայլն, որովհետեւ բոլորս գիտենք դատական համակարգի ծագումնաբանութիւնը»: Այս մասին լրագրողներուն ըսած է Փաշինեան:

«Երբ խօսում են մշակութային քաղաքականութեան մասին, այսօր մեր կառավարութիւնը բացառիկ քայլեր է արել մշակութային քաղաքականութեան հարցում: Մենք մէկ տարուայ ընթացքում 400 մլն դրամով մշակոյթի ֆինանսաւորումն աւելացրել ենք եւ 350 հազարով մշակութային օջախների այցելութիւնների թիւն աւելացրել ենք: Ինչո՞ւ մինչեւ հիմա դա չի արուած», - հարց ուղղեց վարչապետի պաշտօնակատարը՝ աւելցնելով, որ Մշակոյթի եւ Սփիւռք նախարարութիւնները չեն լուծարոււմ, պարզապէս վերակազմակերպոււմ են:

Փաշինեանի խօսքով, պետական կառավարման համակարգէն ներս աշխատողներու աշխատավարձերը կը վճարեն հարկատուները, եւ անոնք յոյս ունին, որ իրենց վճարած միջոցները արդիւնաւէտ կ'օգտագործուին:

որեւէ դատարանի անմեղութեան կանխավարկածը խախտեմ: Եթէ մենք ուզում ենք դատական համակարգն անկախ լինի, նաեւ պէտք է ընդունենք, որ միշտ չէ, որ մեղադրող կողմից եւ դատարանի կարծիքները կը համընկնեն: Այն որոշումները, որոնք կայացուել են հիմնաւորուած, դրանք պէտք է ընդունել ի դիտութիւնը եւ գնալ առաջ: Բայց եթէ դուք հարց էք տալիս գլոբալ առումով, ես ոչ թէ ուզում եմ որեւէ դատարանի անմեղութեան կանխավարկածը խախտեմ, այլ գլոբալ առումով, այո, բոլորս ունենք մտավախութիւններ: Մեր քաղաքացիները պէտք է համոզուած լինեն հետեւեալում, որ երբ ասում ենք, որ դատական ակտերին չենք միջամտութեան, ձեւ չենք անում: Իրօք, ամէն ինչ այդպէս էլ կայ: Գաղտնալուծումները նոյնպէս դա են ապացուցում: Որովհետեւ, եթէ գաղտնալուծումների ամբողջական պատկերը լինի... վերջին գաղտնալուծման մէջ ԱԱԾ տնօրէնը գանգում ասում է՝ դատարանը վախենում է: Ո՞նց թէ վախենում է, ումից է վախենում: Եթէ մենք չենք վախեցրել, ուրեմն ուրիշ վախեցնող կայ», - յայտարարեց Փաշինեանը:

Փաշինեանի խօսքով, եթէ պարզուի, որ Մանուէլ Գրիգորեանին ազատ արձակելը ապօրինի ազդեցութեան արդիւնք է, ինքը շատ կը տխրի: Բայց եթէ պարզուի, որ այդ դատարանի անկախութեան արդիւնք է, ինք շատ կ'ուրախանայ:

ԼՈՒՐԵՐ

ՅԲԾ-ը Ստացած է Ռուսաստանի Պատասխանը՝ Սիքայել Յարուփինեանը Իր Քաղաքացին է

«Մարտի 1»-ի գործով մեղադրեալ, 2008-ին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սիքայել Յարուփինեանը Ռուսաստանի Դաշնության քաղաքացի է: Այդ մասին «Ազատության» փոխանցած է Յատուկ քննչական ծառայության խօսնակ Մարինա Օհանջանեանը, առաջինը, որ լրացուցիչ հարցում ուղարկած են՝ պարզելու, թե Յարուփինեանը երբ ստացած է Ռուսաստանի քաղաքացիություն:

Ըստ «Ինթերֆաքս»-ի, առաջին վաղ ռուսական կողմը չափարարած էր, որ 2002 թվականին Յարուփինեանը Ռուսաստանի քաղաքացի է, իսկ ՌԴ Սահմանադրության մեջ՝ Ռուսաստանի քաղաքացիները չեն կրնար յանձնուել այլ երկրի, այդ շարքին՝ քրեական հետապնդման ենթարկուելու պարագային:

Իրաւաբան Գէորգ Կէօզաբեանը «Ազատության» հետ զրոյցի ժամանակ ըսած է՝ Ռուսաստանը, յղում ընելով Սահմանադրության, իր քաղաքացիին չարտայանձնեք, բայց հայաստանեան իրաւապահները կրնան անոր մասով քրեական գործ ուղարկել Ռուսաստան:

«Մարտի 1»-ի գործով տուժողներու իրաւաջողորներու ներկայացուցիչ, փաստաբան Վահէ Գրիգորեանը իր հերթին նշած է՝ եթէ Յարուփինեանը ՌԴ քաղաքացիութիւն ստացած է մինչ պաշտպանության նախարար նշանակուելը՝ որպէս Զինուած ուժերու Գլխաւոր Շտապի պետ, ապա, ըստ փաստաբանին, Յարուփինեանը պետական եւ ծառայողական գաղտնիքին ծանօթանալու համար պէտք է կառավարութեան թոյլտուութիւն ստանար որպէս օտարերկրեայ քաղաքացի: Գրիգորեանի խօսքով,



ՀՀ պաշտպանութեան Գլխաւոր Սիքայել Յարուփինեան

եթէ մինչ այսօր Հայաստանի պետական մարմինները Յարուփինեանի Ռուսաստանի քաղաքացիութեան մասին տեղեակ չեն եղած, ապա ՌԴ քաղաքացիութիւնը իր պաշտօնավարման ընթացքին ստացած ըլլալու պարագային ան կուպիտ կերպով խախտած է պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին օրէնսդրութիւնը եւ սա նոյնպէս պէտք է Անվտանգութեան մարմիններու քննութեան առարկան դառնայ:

Իրագեկ քաղաքացիներու միաւորման համակարգող Դանիէլ Իոաննիսեանը «Ազատության» հետ զրոյցի ժամանակ պնդած է՝ Յարուփինեանը խախտած է Հայաստանի Սահմանադրութիւնն ու օրէնքները, որոնք կ'արգելին մինչեւ 2007 թվականը ըլլալ նաեւ այլ պետութեան քաղաքացի:

Սիքայել Յարուփինեանը, ըստ Կեդրոնական ընտրական յանձնաժողովի պաշտօնական կայքէջի, ընդգրկուած է ընտրողներու ցանկին մէջ, հետեւաբար նաեւ Հայաստանի քաղաքացի է:

Արարատ Սիրզոյեանը՝ Աժ Խօսնակ, Ալեն Սիմոնեանը, Լենա Նազարեանը՝ Փոխխօսնակներ



Ազգային ժողովի նախագահի պաշտօնին առաջադրուած է Արարատ Սիրզոյեանի թեկնածութիւնը, փոխնախագահներու պաշտօնին՝ Ալեն Սիմոնեանի եւ Լենա Նազարեանի թեկնածութիւնները: Այս մասին 19 Դեկտեմբերին, «Մարտի 1» հիւրանոցին մէջ ընթացած «Իմ Քայլը» դաշինքի քննարկումէն ետք, լրագրողներուն ըսած է դաշինքէն ընտրուած պատգամաւոր Ալեն Սիմոնեանը:

«Իմ Քայլը» խմբակցութեան ղեկավարի պաշտօնին առաջադրուած է մշակույթի նախարարի պաշտօնակատար Լիլիթ Մակունցի թեկնածութիւնը, իսկ խմբակցութեան քարտուղարի պաշտօնին՝ տարած-

քային կառավարման եւ զարգացման փոխնախարար Յակոբ Սիմիտեանի:

«Ինչպէս նաեւ առաջադրուած են քանի մը յանձնաժողովներու նախագահներու թեկնածութիւններ, եւ կարելի է ըսել, որ խմբակցութեան կողմէ ընդունուած են այդ բոլոր առաջարկները», - ըսած է Սիմոնեան:

Ինչ կը վերաբերի ապագայ կառավարութեան կազմին՝ պատգամաւորութեան թեկնածութիւն առաջադրած գործող պաշտօնեաներու, մարզպետներու յետագայ պաշտօնակարման, Ալեն Սիմոնեանը ըսած է՝ «գործադիրի հարցը դեռ որոշուած չէ»:

Փութին. «Հայաստանը Մեր Ռազմավարական Գործընկերն է Տարածաշրջանին Եւ Աշխարհի Սէջ»

Հայաստանը Ռուսաստանի ամենամտերիմ գործընկերն է Անդրկովկասի մէջ, ամէնամեայ մեծ մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարած է Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինը՝ պատասխանելով հայ լրագրողի հարցին, թէ «Ռուսաստանը ինչպէ՞ս կը պատրաստուի վերականգնել յարաբերութիւնները Հայաստանի հետ խորհրդարանական ընտրութիւններէն ետք»:

«Մենք չունինք որեւէ բան, որ քանդուած է եւ կարիք ունի վերականգնման: Հայաստանը մեր ռազմավարական գործընկերն է տարածաշրջանին եւ աշխարհի մէջ, ՀԱՊԿ եւ ԵԱՏՄ անդամ է: Մենք պէտք է զարգացնենք այն, ինչ ունինք», - յայտարարած է Փութինը՝ առաջինը, թէ հայ ժողովուրդը ռուս ժողովուրդի ամենամտերիմ դաշնակիցներէն է:

«Այդպէս եղած է պատմականորէն, այդպէս է այսօր եւ յոյսով եմ՝ այդպէս կ'ըլլայ վաղը: Մենք պէտք է գործենք՝ հաշուի առնելով ներկայ իրադրութիւնը աշխարհի ու տարածաշրջանի մէջ: Այս հարցերը մօտակայ ժամանակներս պիտի քննարկենք պարոն Փաշինեանի հետ, որ յառաջիկայ շաբաթ Ռուսաստան պիտի այցելէ», - ըսած է ՌԴ նախագահը:

Արցախ Կը Մերժէ Պարոյի «Առաջարկը»

Լեռնային Ղարաբաղի նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Դաւիթ Բաբայեան անդրադարձաւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարի խօսքերուն թէ Պաքու պատրաստ է բարձր մակարդակի ինքնավարութիւն տալ Ղարաբաղին, ըսած է, որ էլ մար Մամետեարովի յայտարարութիւնները կը վկայեն այն մասին, որ Պաքուն չէ փոխած իր դիրքորոշումը, հետեւաբար՝ «պարոն Մամետեարովի ցանկութիւնները պիտի մնան ցանկութիւն եւ երազանք»:

Պաշտօնական Պաքուն պատրաստակամութիւն յայտնած է ինքնավարութեան բարձր կարգավիճակ տրամադրելու Լեռնային Ղարաբաղին, բայց՝ միայն Ատրպէյճանի կազմին մէջ:

Ատրպէյճանական կողմէն հետ զրոյցի ժամանակ էլ մար Մամետեարով ամփոստանք յայտնած է, որ զարգացող հակամարտութեան կարգաւորման հարցով տարիներ տեւած բանակցութիւնները այդպէս ալ արդիւնք չեն տուած, սակայն առաջընթաց է՝ յոյս կայ:

Ատրպէյճանի Արտաքին գործոց նախարարի խօսքով՝ Հայաստանի մէջ տեղի ունեցած իրադարձութիւնները, Իլհամ Ալիեւի եւ Նիկոլ Փաշինեանի շփումները, հայաստանցի պաշտօնակցի հետ իր հանդիպումները բանակցութիւններու առաջընթացի որոշակի լատենտութիւն կը ներշնչեն՝ մասնաւորապէս, անոր խօսքով, «գալիք տարուան գրաւուած տարածքներէն հաշկական գօրքը դուրս բերելու հարցով»:

Ռազմաշունչ հոստորաբանութեամբ մշքի ինկող եւ պատերազմի սպառնալիքներ հնչեցնող Ատրպէյճանի իշխանութիւնները, միեւնոյն ժամանակ, կը հաւաստիացնեն, որ հոգ պիտի տանին Լեռնա-

Փութինին հարցուցած են նաեւ Սովետական միութեան մասին, եւ ան նշած է, որ ընկերվարութեան վերականգնումը Ռուսաստանի մէջ հնարաւոր չէ: Հարց եղած է նաեւ ռուս-թրքական յարաբերութիւններու եւ Աթաթուրքի մասին: Փութինը ընդգծած է, թէ կը համարէ, որ Քեմալ Աթաթուրքը մեծ պատմական գործիչ է եւ Ռուսաստանի մեծ ընկերն էր, իսկ այսօրուան յարաբերութիւնները թուրքիոյ հետ Ռուսաստանի նախագահը դրական կը գնահատէ, ըսած է, որ հակառակ տարածաշրջաններուն, ռուս-թրքական յարաբերութիւնները պէտք է, որ գոհացնեն թէ՛ Ռուսաստանին եւ թէ՛ Թուրքիոյ:

Նախօրէին հրապարակուած էին Լեւտա Կեդրոնի նոր տուեալները այն մասին, որ Փութինի վարկանիշը այսօր չափազանց ցած է: Անոր իրենց ձայները պատրաստ են տալ հարցախոյզի մասնակցած ռուսերու միայն 45 տոկոսը, Փութինի վարկանիշը այսքան ցած եղած էր 2014-ին՝ Խրիմի դէպքէն առաջ:

Ասուլիսի ժամանակ Փութինը ընդգծած է, որ Ռուսաստանի անտեսութիւնը լաւ թափով կը զարգանայ եւ խոստացած է կարգաւորել տարբեր հարցեր, որ հնչած էին ասուլիսի ընթացքին:



ԼԴՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Դաւիթ Բաբայեան

ին Ղարաբաղի բնակչութեան համար: «Մեր երկիրը ինչպէս իր քաղաքացիներուն, այնպէս ալ Լեռնային Ղարաբաղի հայազգի բնակիչներուն անվտանգութիւնը պիտի ապահովէ, անոնց պիտի տրամադրէ բարձր մակարդակի ինքնավարութիւն՝ Ատրպէյճանի միջազգայնօրէն ճանաչուած սահմաններու շրջագիծէն ներս», - յայտարարած է ատրպէյճանական դիւանագիտութեան ղեկավարը:

Դաւիթ Բաբայեան ծիծաղելով ըսած է, թէ «կը գնահատեն Պաքուի շուսուութիւնը», բայց «ամանորեայ նուէրը» թերի է՝ պէտք է նաեւ յայտարարէին, որ Լեռնային Ղարաբաղի նահանգապետի պաշտօնն ալ պիտի զբաղցնի Ռամիլ Սաֆարովը, որ 2004 թվականին Պուտինի ղեկավարութիւնը մէջ հայ սպայ Գուրգէն Մարգարեանը կացնահարելու համար հռոնկարական դատարանի կողմէ ցմահ ազատազրկման դատապարտուած էր, սակայն 2012-ին յանձնման ենթարկուեցաւ հայրենիք եւ Պաքու ժամանելուն պէս ներման արժանացաւ Ատրպէյճանի նախագահի կողմէն:

Իսրայելի Քնեսեթին Մեջ Քննարկուած Է Հայաստանէն Կեդժ Վկայականներ Ստացած Բժիշկներու Հարցը



Իսրայելի քաղաքացի արաբ ուսանողներու կողմէ Հայաստանէն հարկըրաւոր կեդժ վկայականներու ձեռք բերման մասին գալթակղալին հետաքննութիւնը այժմ ալ դարձած է Իսրայելի Քնեսեթի քննարկման թեման:

Քնեսեթի աշխատանքի, ընկերային ապահովութեան եւ առողջապահութեան խորհրդարանական յանձնաժողովը քննարկում կազմակերպած էր, որուն կը մասնակցէին բազմաթիւ պատգամաւորներ ու կրթութեան եւ առողջապահութեան նախարարութեան աշխատակիցներ: Գլխաւոր բանախօսը առողջապահութեան նախարարութեան քատրերու բաժնի պետ, փրոֆեսոր Շաուլ Եացիւն էր, որ իր խօսքին մէջ նշած է, որ ռազմագիտական լուրջ խնդիրներ պիտի ունենայ երկիրը, եթէ միջոցներ չձեռնարկեն ու շարունակեն ընդունիլ շատ ցած մասնագիտական կրթութիւն տրամադրող Մոլտովայի ու Հայաստանի բժշկական հաստատութիւնները աւարտած ուսանողներ: Նիստի ընթացքին ան ըսած է, որ շատ ուսանողներ, որոնք պատրաստուած կ'անցնին, իրենց կեանքին մէջ նոյնիսկ հիւանդ չեն տեսած:

«Հայաստանի մէջ վիճակը աւելի ծանր է քան Մոլտովայի մէջ, եւ չեմ խօսիր այժմ ուստիկանութեան հետաքննութեան մասին, որովհետեւ կասկած նոյնիսկ չկայ, որ ուսանողները բաւարար չեն սորվիր, դասաժամերը քիչ են ու գործնական աշխատանքներն ալ ոչ բաւարար են, - ըսած է Փրոֆեսոր Եացիւրը:

Այժման Ուտ, որ կը գլխաւորէ արաբական միացեալ ցուցակը Քնեսեթի մէջ, նախ մեղադրած է առողջապահութեան նախարարութեան, որ արտօնագրեր տուած էր հետագային ձեռքակալուած այդ բժիշկներուն: «Այդ մարդիկ յանձնած են պետական քնութիւնները ու կ'աշխատէին նախարարութեան թոյլտուութեամբ եւ յանկարծ կը յայտարարեն, որ այդ մարդիկ յանցագործներ են: Այդ կերպ պետութիւնը ոտնահարած է անոնց իրաւունքներն ու կասկածի տակ առած՝ անոնց մասնագիտական հեղինակութիւնը նաեւ խաղցած է անոնց ընտանիքներուն պատիւին հետ», յայտարարած է ան:

Պատգամաւոր Աիմատ Տիպի, որ նաեւ մասնագիտութեամբ բժիշկ է, իր հերթին նիստի ժամանակ ըսած է, թէ շատ վրդոված է ուստիկանական գործողութեան անուանումէն՝ «Սպանութեան արտօնագիր», ու մարդոց ձեռքակալութիւններէն, կարծես թէ խօսք կ'երթար մարդասպաններու ու թմրապիզնեսի ոլորտի յանցագործներու մասին: Ան աւելցուցած է, որ այսօր արաբ դեղագործներն ու բժիշկները ծանրակշիւ ազդեցութիւն ունին, Իսրայելի մէջ լաւագոյն մասնագէտներն են ու շատ արաբ բժիշկներ կը ծանչնայ, որոնք աւարտած են թէ՛ Մոլտովայի, եւ թէ՛ Հայաստանի բուհերն ու այսօր լաւ մասնագէտներ են: Այնուհետեւ քննարկումը տեղափոխուած է արաբ-հրէական հակամարտութեան եւ ցեղապաշտութեան ու խտրականութեան դաշտ, որմով ալ աւարտած է՝ առանց որեւէ որոշման:

Աշխարհին Պետք Է Աւելիով Տեղեկացնել

Շարունակուած էջ 1-էն

Թիւններով:

«Հայաստանի Հանրապետութիւնում ժողովրդավարութեան երկու շատ խոշոր չաղթանակ արձանագրուեց՝ առաջինը Ապրիլ-մայիսին տեղի ունեցած ոչ բռնի, թաւշեայ, ժողովրդական չեղափոխութիւնն էր, որը արձանագրուեց որպէս ժողովրդական կամքի յաղթանակ, եւ երկրորդը խորհրդարանական ընտրութիւններն էին, որոնք, միջազգային դիտորդների գնահատմամբ, աննախադէպ են մեր երկրի պատմութեան մէջ, եւ ըստ հուստեան արձանագրել են այդ ընտրութիւնների համապատասխանութիւնը ժողովրդավարութեան չափա-

նիշներին», - ըսած է վարչապետի պաշտօնակատարը:


Նիկոլ Փաշինեան շեշտած է որ, 2019-ին ժողովրդավարական բարեփոխումները պիտի շարունակուին եւ Հայաստանի մէջ իսկապէս պէտք է հաստատուի օրէնքի իշխանութիւն, անկախ դատական համակարգ եւ Հայաստանի իշխանութիւնը պէտք է արտաքին քաղաքականութիւն վարէ օրինականութեան հենքի վրայ:

«Եւ որեւէ կասկած չի կարող լինել, որ ժողովրդավարութիւնը իսկապէս մեր հաւատամքն է եւ արժէքների մեր համակարգն է, եւ ժողովրդավարութիւնից Հայաստանի Հանրապետութիւնում չի կարող ընդհանրապէս լինել որեւէ շե-

Պուէնոս Այրեսի Ոստիկանութիւնը Խուզարկած Են Էտուարտո Էռնէկեանի Տունը

Դատաւորի որոշմամբ Պուէնոս Այրեսի ոստիկանութիւնը խուզարկած է արժանթինահայ մեծ գործարար Էտուարտո Էռնէկեանի սեփական տունը եւ անոր պատկանող «Քորփորասիոն Ամերիկա» ընկերութեան շարք մը գրասենեակներ: Այս մասին կը հաղորդեն տեղական բոլոր լրատուամիջոցները:

Էռնէկեանը կ'անցնի մեծ դատական գործով մը, որ կը հետաքննէ, թէ ինչպէս շարք մը գործարարներ կաշառքներ տուած են իշխանաւորներուն տարբեր տնտեսական առաւելութիւններ ստանալու համար:



Ժարարներէն մէկը: 2017-ին անոր շնորհուած է «Հայաստանի ազգային հերոս» բարձրագոյն կոչումը:

ԱՄՆ-ն Համաձայնած Է Թուրքիոյ Վաճառել «Patriot» Հրթիռային Համակարգերը



ԱՄՆ-ի պետական քարտուղարութիւնը հաւանութիւն տուած է «Patriot» տեսակի հրթիռային համակարգերը Թուրքիոյ վաճառելու գործարքին, որու արժէքը 3,5 միլիարտ տոլար կը կազմէ: Անգարան ԱՄՆ-ին դիմած էր «Patriot» տեսակի 4 համակարգ գնելու համար՝ ներառեալ երկու տասնեակ արձակման կայաններով եւ 80 հրթիռներով:

Սակայն 2017 թուականին Անգարան Ռուսաստանի հետ համաձայնագիր ստորագրած էր ռուսական «S-400» հրթիռային համակարգեր գնելու համար: Միացեալ Նահանգները եւ ՆԱԹՕ-ն բազմիցս զգուշացուցած են Անգարային, որ ռուսական հրթիռները չեն կրնար տեղ ունենալ ՆԱԹՕ-ի տարածքի

հակաօդային պաշտպանութեան համակարգին մէջ:

Անցած Նոյեմբերին Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաւուշօղլուն ըսած է, թէ ռուսական հրթիռները գնելու համաձայնագիրը պիտի մնայ ուժի մէջ: Քրեմլի մամուլի խօսնակ Տմիթրի Փեսքովը ըսած է, որ «S-400» հրթիռային համակարգերը Թուրքիոյ վաճառելու գործարքը պիտի իրականացուի անկախ այն բանէն, թէ Անգարան ինչ որոշում պիտի ընդունի «Patriot»-ի հետ կապուած:

Կ'ակնկալուի, որ ռուսական «S-400»-ի առաջին խմբաքանակը Թուրքիան պիտի ստանայ 2019 թուականին:

ղում», - ըսած է Փաշինեան:

Նման ընդունելութիւն տեղի ունեցած է նաեւ Կենտրոնական Դրամատան մէջ, ուր վարչապետի պաշտօնակատարը խօսած է հայկական դրամի մասին՝ ընդգծելով, որ հակառակ քաղաքական բուռն իրադարձութիւններուն, դրամը պահպանեց իր կայունութիւնը:

«Տարուայ ամենամեծ սենսացիաներից մէկը, թերեւս, դրամի վարքագիծն էր Հայաստանում քաղաքական բուռն իրադարձութիւնների ժամանակաշրջանում, եւ ինչպէս դեռեւս շատ շատերի համար հասկանալի չէ, թէ ինչ եւ ինչպէս տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութիւ-

նում քաղաքական իմաստով, նաեւ շատ-շատերին հէքան էլ հասկանալի չէր, թէ ինչպէս եղաւ, որ այնուամենայնիւ, այդ քաղաքական գործընթացների համատեքստում հայկական արժույթը զարմանալի կենսունակութիւն ցուցաբերեց», - յայտարարած է Փաշինեան:

Անդրադառնալով Կենտրոնական Դրամատան եւ կառավարութեան համագործակցութեանը՝ վարչապետի պաշտօնակատարը շեշտած է, որ գլխաւոր նպատակը պէտք է ըլլայ Հայաստանի քաղաքացիներու կեանքը բարելաւելն ու նոր հնարաւորութիւնները հասանելի դարձնելը:

Նիկոլ Փաշինեան.

«Ջնջել Ենք Յայաստանի Եւ Սփիւռքի Միջեւ Սահմանը, Որովհետեւ Մեր Գլխաւոր Խնդիրն Է Ստեղծել Հնարաւորութիւններ Բոլորի Համար»

Վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը UWC Դիլիջան քոլեջում հանդիպել է «Ներուժ» ծրագրի մասնակիցներին: Ողջունելով վերջիններին՝ Նիկոլ Փաշինեանը նշել է, որ այսօր առաւօտեան կարգաքանդակ է մի տեքստ, որի հեղինակը փորձել էր պատասխանել հարցին, թէ ինչով է տարբերում յաջողակ մարդն անյաջողակից: «Իմ կարծիքով՝ շատ հզօր պատասխան էր գտել այդ հարցին: Ըստ այդ վարկածի՝ յաջողակ մարդը նա է, ով կարողանում է ինքն իրեն ստիպել գործել, ինչ-որ բան անել եւ ուղղակի չմնալ տեղում նստած՝ սպասելով ինչ-որ ուրիշ մէկի անելիքներին արդիւնքներին: Ինչո՞ւ է մեծ եւ սա յիշում եւ մէջբերում, որովհետեւ կարծում եմ՝ հէնց «Ներուժ» բառն արտայայտում է այս ամբողջ տրամաբանութիւնը, որովհետեւ մենք ուժեղ եւ յաջողակ ենք այնքանով, որքանով մեր ներսում ունենք ուժ՝ ինքներս մեզ ստիպելու ինչ-որ բան անել եւ չսպասել ինչ-որ ուրիշ մէկի անելիքին: Հետեւաբար, սա է նաեւ այն առանցքային տրամաբանութիւնը, որ այսօր մենք փորձում ենք Հայաստանի Հանրապետութիւնում գործարկել: Մենք ուզում ենք այնպէս անել, որ հնարաւորինս աւելի ու աւելի մեծ թուով մարդիկ ՀՀ-ում իրենք իրենց կարողանան ստիպել, համոզել սպասելու փոխարէն՝ գործել, մենք ուզում ենք այնպէս անել, որ ոչ թէ քաղաքացիները սպասեն, թէ երբ է, օրինակ, կառավարութիւնն անելու տնտեսական յեղափոխութիւնը, այլ իրենք ուղղակի վեր կենան եւ անեն իրենց բաժին տնտեսական յեղափոխութիւնը», - նշել է վարչապետի պաշտօնակատարը՝ աւելացնելով, որ այսօրուայ հանդիպումն ընկալում է հենց այդ համատեքստում:



տութեան տասնեակ հազարաւոր, հարիւր հազարաւոր քաղաքացիներ, եթէ ոչ քաղաքացիների մեծամասնութիւնը, Հայաստանի Հանրապետութիւնում ապրելով, իրենք էլ ինչ-որ առումով եղել են սփիւռքահայ: Ինչո՞ւ, որովհետեւ նրանք հասու չեն եղել այն հնարաւորութիւններին, որոնց հասու պիտի լինի քաղաքացին: Մենք այսօր շատ ենք խօսում Սփիւռքին հնարաւորութիւններ տալու մասին: Ես հարցն այդպէս չեմ ձեւակերպում, որովհետեւ չեմ ցանկանայ տպաւորութիւն ստեղծել, որ, ահա, Սփիւռքի երիտասարդութեանը հնարաւորութիւն ենք տալիս՝ միեւնոջն ժամանակ մոռանալով Հայաստանի Հանրապետութիւնում ապրող երիտասարդներին: Սա շատ նուրբ պահ է, որովհետեւ որն է մեր յեղափոխութեան առանցքային իմաստը Հայաստան-սփիւռք յարաբերութիւններում: Մեր յեղափոխութեան առանցքային իմաստն այն է, որ այդ սահմանն այլեւս ջնջուած է, այլեւս չկայ Հայաստան եւ Սփիւռք, այլեւս կայ մէկ ամբողջական հայութիւն, եւ մեր խնդիրն է հենց դա արձանագրելը», - ընդգծել է Նիկոլ Փաշինեանը:

Վարչապետի պաշտօնակատարի խօսքով՝ կառավարութեան առանցքային նպատակն է այնպէս անել, որ իւրաքանչիւրը ե՛ւ Սփիւռքում, ե՛ւ Հայաստանում հասու լինի հնարաւորութիւններին:

«Ի վերջոյ, երբ ասում եմ, որ բազմաթիւ մարդիկ ապրելով Հայաստանում՝ ըստ էութեան ապրել են սփիւռքում, նկատի ունեմ հետեւեալը. բազմաթիւ մարդիկ մտածել են, որ այս երկրում ապագայ

չկայ, այստեղ ամէն ինչ անիմաստ է, մէկ է, այստեղ ոչ մի բան չի փոխուի: Այս կէտից է, երբ մարդու մօտ սկսում է արտագաղթելու պրոցեսը: Արտագաղթելը մի օրուայ որոշում չէ, այնպէս չէ, որ առաւօտեան արթնանում ես, սուրճ խմում եւ ասում՝ զնամ ճամպորտներս հաւաքեմ ու մեկնեմ: Դա շատ երկար պրոցես է, բարդ հոգեբանական որոշումների, իրադարձութիւնների շղթայ է: Այնպէս որ, այո, մենք էլ շատ դէպքերում, ըստ էութեան, եթէ ոչ ֆիզիկապէս, առնուազն մտովի սփիւռքում ենք ապրել այն առումով, որ հեռու ենք զգացել մեզ՝ մեր իսկ երկրում հնարաւորութիւններ ունենալուց: Եւ հետեւաբար մեր յեղափոխութեան առանցքային իմաստը հենց սա է. մենք ջնջել ենք Սփիւռքի եւ Հայաստանի միջեւ սահմանը, որովհետեւ մեր գլխաւոր խնդիրն է ստեղծել հնարաւորութիւններ բոլորի համար: Եւ կառավարութեան ամենակարեւոր առաքելութիւնը դա է՝ մարդկանց մղելը յաջողութիւնների: Կառավարութեան ամենամեծ խնդիրն է քաջալերել մարդուն, օգնել նրան, որ նա յաղթահարի փակուղին, յուսահատութիւնը եւ ինքն իր մէջ նաեւ քաղաքական մթնոլորտի, քաղաքական ուղերձի բերումով այնպիսի մի ներուժ ձեւաւորի, որ այդ ներուժն ամէն մէկին կարողանայ ստիպել ի վերջոյ գործել՝ սպասելու փոխարէն», - ասել է Նիկոլ Փաշինեանը՝ աւելացնելով, որ յեղափոխութիւնը հենց դա է, երբ ոչ թէ սպասում ենք ինչ-որ մէկի գործողութեանը, որի արդիւնքում կը ստանանք ինչ-որ նոր բան, այլ ինքներս ենք գործում

եւ մեր, մեր երկրի համար ստեղծում ինչ-որ բան:

«Հետեւաբար ես համոզուած եմ, որ մենք որպէս ժողովուրդ, որպէս ազգ, ունենք մեծ ներուժ, եւ այդ ներուժի արտայայտութիւնը հետեւեալն է՝ ոչ թէ սպասել, որ ուրիշները մեր փոխարէն որոշումներ կայացնեն եւ որոշեն մեր ճակատագիրը, այլ մենք հասկանանք եւ գիտակցենք, որ ունենք բաւարար կամք, ուժ, հմտութիւն, իմաստութիւն եւ խելք ինքներս մեր ճակատագիրը որոշելու, ինքներս մեր յաղթանակները կերտելու, որովհետեւ մենք այլեւս արդէն որպէս ժողովուրդ սովորել ենք յաղթելուն եւ այդ սովորութիւնից ոչինչ մեզ հետ չի սովորեցնի: Այնպէս որ մեզ բոլորիս մաղթում եմ նորանոր յաղթանակներ», - նշել է Նիկոլ Փաշինեանը:

Այնուհետեւ վարչապետի պաշտօնակատարը պատասխանել է «Ներուժ» ծրագրի մասնակիցներին հետաքրքրող մի շարք հարցերի, որոնք վերաբերուել են պետական կառավարման համակարգի օպտիմալացմանն ու արդիւնաւէտութեան բարձրացմանը, Հայաստան-սփիւռք յարաբերութիւններին, տեղեկատուական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը, վեոնուրային կապիտալի ներգրաւմանը եւ այլ թեմաների:

Հանդիպումից յետոյ Նիկոլ Փաշինեանը ծանօթացել է «Ներուժ» ծրագրին մասնակից մի քանի ստարտափերի գործունէութեանն ու ծրագրերին:

«Ներուժ» ինտերակտիւ ստարտափ ծրագիրը նախատեսուած է սփիւռքի 18-35 տարեկան հայազգի երիտասարդ ձեռներէյցների համար: Այն բացառիկ հնարաւորութիւն է բիզնես ոլորտի գիտելիքների հարստացման, գործընկերային կապերի ընդլայնման, ինչպէս նաեւ մեկնարկային ծրագրեր ներկայացնելու, ֆինանսաւորում ստանալու եւ դրանք իրագործելու համար:

Ծրագրին մասնակցում են մօտ 70 ստարտափերներ, որոնցից 50-ը՝ սփիւռքից: Այն անցկացւում է Հայաստանում՝ UWC Դիլիջան քոլեջում, 2018 թուականի դեկտեմբերի 17-ից 21-ը: Յաղթողները կը ստանան մինչեւ 15 միլիոն դրամ արժողութեամբ դրամաշնորհ, ինչ-

Շար.ը էջ 18

LIFE INSURANCE INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE LONG TERM CARE MEDICARE DENTAL & VISION DISABILITY



M MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

Call us today!

(818) 500 9585
(818) 269 0909

Bedros & Siamanto
805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815
MARONIANINSURANCE.COM

Ջերմուկ Համայնքի Տարածքում Արգելուեց Մետաղական Հանքարդիւնաբերութիւնը



Ուղիղ ժողովրդավարութեան սկզբունքը հերթական յաջողութիւնը գրանցեց Հայաստանում: Ջերմուկ խոշորացուած համայնքի աւագանին 2018 թուականի Դեկտեմբերի 18-ին որոշում է ընդունել, որով հաւանութիւն է տուել համայնքի բնակիչների կողմից համայնքի ավագանուն ներկայացրած կոլեկտիւ հանրագրում նշուած «Ջերմուկ համայնքը էկո-տնտեսական տարածք դարձնելու եւ համայնքում մետաղական հանքարդիւնաբերութիւնը արգելելու վերաբերեալ առաջարկութեանը:

Աւագանին այս որոշումն ընդունել է ընդունել է 7 կողմ, 0 դէմ, 0 ձեռնպահ ձայներով՝ դեկլարուելով «տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքի 18-րդ յօդուածի 1-ին կէտի 42-րդ ենթակէտով, «հանրագրերի մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքի 4-րդ յօդուածի 1-ն մասի 3-րդ կէտով, հաշուի առնելով Ջերմուկ համայնքի աւելի քան երեք հազար բնակիչների կողմից ներկայացուած հանրագիրը, առաջնորդուելով Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան 184-րդ յօդուածի 3-րդ մասով եւ «տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքի 8-րդ յօդուածով շարադրուած տեղական ինքնակառավարման սկզբունքներով:

Յիշեցնենք, որ Ջերմուկ համայնքի առկայ բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը իրացրել էին ուղիղ ժողովրդավարութեան իրենց իրաւունքը եւ շուրջ 3000 ստորագրութեամբ կոլեկտիւ հանրագիր էին ներկայացրել ՀՀ կառավարութեանն ու Ջերմուկ համայնքի ավագանուն ու դեկլարին, որտեղ ներկայացրել էին իրենց տարածաշրջանի տնտեսական զարգացման տեսլականը եւ պահանջել, որպէսզի տարածաշրջանում արգելուի մետաղական հանքարդիւնա-

բերութիւնը եւ զարկ տրուի կանաչ կաթնատնտեսութեան զարգացմանը:

Հանրագրում բնակիչները նշել էին նաեւ հետեւեալի մասին.

«Ամուլսարում ոսկու արդիւնահանմանը դրական եզրակացութիւններ տալով՝ նախորդ կառավարութիւնները ոտնահարել են նաեւ մեզ վրայ ազդող որոշումների կայացմանը մասնակցելու մեր իրաւունքը. նախ, մինչեւ 2016թ. մեր համայնքի խոշորագոյն քաղաքը՝ Ջերմուկը չի էլ համարուել Ամուլսարի ծրագրի ազդակիր, իսկ 2016-ին ազդակիր յայտարարուելուց յետոյ էլ այստեղ պատշաճ կարգով չեն կազմակերպուել հանրային լսումներ: Լիդիան ընկերութիւնը, ինչպէս նաեւ նախկին իշխանութիւնների ներկայացուցիչները, արհամարհել են մեզ, փորձել են ապակողմնորոշել կամ վախեցնել: Մենք պահանջում ենք, որպէսզի նոր կառավարութիւնը յարգի ժողովրդի կամքը, եւ այդ յոյսով էլ ներկայացնում ենք սոյն հանրագիրը:

ՀՀ կառավարութիւնը դեռեւս չի արձագանքել այս հանրագրում ներկայացուած պահանջներին:

Արդէն 6 ամսից աւելին է, որ ի նշան բողոքի Ջերմուկի բնակիչները շարունակում են փակ պահել Ամուլսար լեռան տարածք տանող ճանապարհները՝ թոյլ չտալով շինարարական աշխատանքների իրականացումը:

Հ.Գ. Այս տարուայ Մայիս ամսին էլ Նոյեմբերեանի աւագանին էր ընդունել նմանատիպ որոշում, որով արգելել էր իրենց համայնքի տարածքում իրականացնել երկրաբանահետախուզական եւ մետաղական հանքերի շահագործման աշխատանքները: Այդ որոշումը նոյնպէս կայացուել էր համայնքի բնակիչների կողմից ներկայացուած հանրագրի հիման վրայ, որը ստորագրել էր 3074 բնակիչ:

Հայկական բնապահպանական ճակատ քաղաքացիական նախաձեռնութիւն

Կարօ Փայլանը Թուրքիոյ Խորհրդարանի Նիստի Ժամանակ Շնորհաւորած է Նիկոլ Փաշինեանը

Թուրքիոյ Ազգային մեծ ժողովի ժողովրդադեմոկրատական խմբակցութեան հայազգի պատգամաւոր Կարօ Փայլանը խորհրդարանական նիստի ժամանակ թրքերէն, ապա նաեւ հայերէն շնորհաւորած է ՀՀ վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը եւ անոր խմբակիցները՝ Հայաստանի մէջ կայացած արտահերթ խորհրդարանական ընտրութիւններու ժամանակ ունեցած յաջողութեան առիթով:

Փայլանի ֆէյսպուքեան էջին մէջ հրապարակուած տեսանիւթին մէջ, մասնաւորապէս, ըստած է. - «Անցած շաբաթ հարեւան Հայաստանի մէջ խորհրդարանական ընտրութիւններ տեղի ունեցան: Ապրիլ ամսուն իրականացուած թաւշեայ յեղափոխութեամբ վարչապետ դարձած Նիկոլ Փաշինեանն ու ընկերները, այս ընտրութիւններուն ստանալով 70 տոկոս ձայն, կարեւոր յաջողութիւն գրանցեցին: Այս կապակցութեամբ Թուրքիոյ Ազգային մեծ ժողովին կը շնորհաւորեմ ժողովրդավարական ընտրութիւնները յաջողութեամբ իրականացուցած Հայաստանի ժողովուրդը, Նիկոլ Փաշինեանը եւ անոր խմբակիցները»:


Անդրադառնալով Թուրքիոյ հետ առանց նախապայմաններու յարաբերութիւններ հաստատելու պատրաստակամութեան մասին Փաշինեանի յայտարարութեան՝ հայազգի պատգամաւորը թրքական իշխանութիւններուն համարժէք արձագանգելու կոչ ըրած է:

«Ես կոչ կ'ընեմ Թուրքիոյ




խորհրդարանին եւ երկրի նախագահին կառուցողական պատասխան տալու Հայաստանի վարչապետի յայտարարութեան: Կը հաւատամ, որ չկայ հարց մը, որ հնարաւոր չէ խաղաղ ճանապարհով լուծել 25 տարի Թուրքիոյ հետ փակ սահման ունեցող հարեւան Հայաստանի հետ: Յաջողութիւն Նիկոլ Փաշինեանին եւ ընկերներուն», - ըսած է Փայլանը՝ իսօքը աւարտելով հայերէն բարեմաղթանքով:

Փայլան նաեւ, կոչ ըրած է յստակեցնելու հայերու եւ այլ փոքրամասնութիւններու դպրոցներու կարգավիճակը, քանի որ, հակառակ Լոզանի պայմանագրին, որմով Թուրքիոյ կրօնական փոքրամասնութիւններուն կը տրուի համայնքային դպրոցներ ունենալու իրաւունք, անոնց պաշտօնական կարգավիճակը յստակ չէ: Պետութիւնը կանոնակարգուած չաջակցիր այդ հաստատութիւններուն:




Հ.Բ.Մ. ՍԱԹԱՄԻԱՆ ԹԱՏԵՐԱՆՈՒՄԲԸ
ՀԱՆՍԱԳԵՍ ԱՐՏԱԽԱԶԳԻ
Կը ներկայացնէ՝



Իր Հիմնադրութեան
40-րդ Տարեդարձին առիթով

ՄՏԱԽՈՍԻ



Նոր Թեմադրութեամբ
Կատակերգութիւն երկու արարով

Հեղինակ՝
ԳԱՐԵՍ ԿՈՆՏՈՆԻ

Թեմադրիչ՝
ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԻԱՆ

«Ստախոսը»
կատակերգութիւնը պիտի կրկնուի
հետեւեալ քուակացներուն.

Ուղիղ 80 տարիներ առաջ, հակառակ ամենախիստ հակահրօն հալածանքներուն, Ամենայն Հայոց Տ.Տ. Խորէն Ա Մուրատբեգեան կաթողիկոս, յանուն Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին, Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան վերաբերեալ «Ձեկուցում» կրճատեալ անուսով ընդարձակ թղթածրար մը ղրկած էր Երուսաղէմի Հայոց Տ. Թորգոմ Պատրիարք Գուշակեանին առ ի քննութիւն: Այլագան հարցերու շարքին որոնց աչլուր անդրադարձած էմ, կային վերոյիշեալ երկու խնդիրները եւս «Պահքի վերացում»ն ու «Ամուսնալուծութիւն»ը զորս կը փափաքիմ ուշադրութեանը յանձնել մեր ընթերցողներուն Նոր Տարուան սեմին: Ի պատիւ Երուսաղէմի Պատրիարք Հօր հարկ է նշել որ իր իմաստուն եւ հաւասարակշռուած քննարկումներով, միանգամայն գնահատական եւ քննադատական մօտեցումով, ՍԻՈՆ ամսագրի շարունակական խմբագրականներով հանդէս եկած է: Պատրիարք Հօր վախճանման 80-ամեակը պիտի նշուի յառաջիկայ տարի:

Պահքի Վերացման Հարցը

Մայր Աթոռի «Ձեկուցում»ը Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան տարրերէն մին կը նկատէ պահեցողութեան բարեփոխութիւնը զոր սակայն «վերացում» կ'որակէ, առանց տալու այդ բարեփոխական կանոնին աւելի լուրջ եւ պատկառ ուշադրութիւն: Ինչպէս Թորգոմ Գուշակեան Պատրիարք կը հաստատէ պահքը վերացնել բարեկարգութեան նպաստել երբեք չի նշանակեր, զայն բարեփոխել՝ այո: «Ձեկուցում»ը անկեղծօրէն կը հաստատէ որ պահեցողներուն թիւը շատ նուազած է, եւ սակայն այդ երբեք պէտք չէ նշանակէ «վերցնել» եւ մոռացութեան տալ պահքի բարեպաշտական դրութիւնը որ Աւետարանական է եւ Տէրունի:

Յետոյ, աւելցնել որ պահեցողներն ալ ո՛չ թէ իբրեւ ապրում, այլ իբրեւ սովորութիւն է որ պահք կը բռնեն, պարզապէս անարդար վերադրում մըն է, եւ հոգեւոր վերին իշխանութեան կողմէ բխած անվաւեր ենթադրութիւն մը: Մարդ չի կրնար ըսել թէ պահեցողներ ինչ ապրումով է որ կը կատարեն իրենց կրօնական պարտականութիւնները պահք բռնելով, աղօթելով, եւ ներամփոփ շրջան մը ապրելով իրենք իրենց մէջ: Դատաստան ընել անարդար է եւ անպատշաճ:

«Ձեկուցում»ը նոյն ատեն հակասութեան մէջ կ'իյնայ առաջարկելով պահքը ամփոփել կրճատեալ օրերու վրայ տեղաւորելով եկեղեցական Տօնա-ցոյցին մէջ: Աւելին, փոխանակ «վերցնելու» եւ պահեցողներուն ալ զլանալու իրենց հոգեւոր պարտականութիւնները, հոգեւոր վերին իշխանութիւնը առ նուազն կամաւոր պահեցողութեան վրայ շեշտը պէտք է դնէր որ շատ աւելի անձնական եւ զոհաբերող ոգի ունի իր մէջ:

Պահքի «վերացման» շփոթութիւնը յառաջացնելով, «Ձեկուցում»ը կը թելադրէ Չատկի եւ

Մնդեան տօներուն մէկական շաբաթ պահք բռնել, եւ շաբաթօրեայ պահքերէն զեղչել չորեքշաբթիի պահքը, եւ պահել միայն ուրբաթ օրուանը՝ խաչելութեան չիշատակին նուիրուած: Ամենէն վտանգաւորը սակայն այնտեղ Մեծ Պահոց քառասորդաց շրջանի պահեցողութեան մասին խօսքն անգամ չկայ, զոր «Ձեկուցում»ը լռելեայն «վերցնել» կ'առաջարկէ, եւ Թորգոմ Պատրիարք զայն ամենալուրջ եւ ծանրակշիռ զանցառում կը նկատէ, քանի որ ան քրիստոնէական կրօնի ողնայարը կազմող հոգեւոր պատրաստութեան մեծագոյն առիթն է եղած:

Ընդհակառակը, «Ձեկուցում»էն 80 տարիներ ետք, այսօր, Մեծ Պահքը ունի իր հոգեւոր նշանակութիւնը եւ շատեր կը պահեն զայն՝ հեռու մնալով արգիլեալ սննդեղեններէն: Մեր կարծիքով աշխարհիկ եւ ընկերային պարագաները նկատի առնելով, պահեցողութեան օրերը տարապայմանօրէն զեղչել երբեք չի նպաստեր եկեղեցական բարեկարգութեան: Չայն կամաւոր թողուլ, առանց օրերը խանգարելու բնական կերպը պիտի ըլլար պահեցողութեան մասին բարենպաստ վճիռ արձակելու:

Ամուսնալուծում

«Ձեկուցում»ը տրամաբանականօրէն մօտենալով ամուսնալուծման խնդրին, չուզեր յամառիլ անոր բացարձակ արգելքին վրայ, այլ աշխարհիկ եւ ընկերային պարագաները նկատի առնելով, հիմնական պատճառերու բերումով, ամուսնալուծումը կարելի կը դարձնէ, հետեւելով Շահապիվանի ժողովի մէկ որոշումին, որով ամուսնալուծումը կարելի կ'ըլլայ անհաւատարմութեան, ամուսնեան, մարմնական եւ հոգեկան արատներու, արեցողութեան եւ անհաշտ բնաւորութեան պատճառներով:

Տիրոջ Յիսուսի յորդորը առաջին քննարկումն է երբ կ'ըսէ «միակ բացառութեամբ» կարելի է արձակման թուղթ տալ ի նպաստ այդ խիստ անբաղձալի այր եւ կնոջ բաժանման, ցոյց տալով «պոռնկութեան պատճառը» (Մատթ 19:9), որուն հետեւանքով միայն այրը պիտի տար իր արձակման թուղթը: Յետագայ եկեղեցական ժողովները յաւելեալ պատճառներ տուին, ինչպէս, ամուսնութենէն միւսնէ երեք տարի վերջ յայտնուած ամուսնութիւնը, եւ զերի տարուելու պատճառով միւսնէ տաս տարի ամուսնին բացակայութիւնը:

Հայ Եկեղեցւոյ պարագային երկու եկեղեցական ժողովներ կանոններ սահմանած են, Շահապիվանի 447 եւ Դուրինի 645 թուականներուն, եւ սակայն յաջորդող ժողովներ աննկատ թողած են հարցին քննութիւնը, պատճառ դառնալով ամուսնալուծման թոյլ եւ քմահաճ կացութեան: Միջնադարուն Մխիթար Գօշն ու Ներսէս Շնորհալի Հայրապետ, որոնցմէ ծանրակշիռ դատողութիւն կ'ակնկալուէր «Դատաստանագիրք»ին մէջ, ամուսնութեան մասին կանոններ եւ յորդորներ տալէ զատ ամուսնալուծման մասին ոչինչ տուած են:



S.S. Խորէն Ա Մուրատբեգեան Կաթողիկոս



S. Թորգոմ Պատրիարք Գուշակեան

Բարոյական գեանի վրայ պահքը նախապատուութիւն ունի որ Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան ազդակներէն մին պէտք է համարել, այն թէ ամէն գնով պէտք է ջանալ Աստուծոյ միացուցածը չբաժնել աժան դիտումներով, այլ աշխատիլ վերացնելու «առաձգական» նկատուած պատճառները, ֆիզիքական կամ հոգեկան, եթէ իրապէս բարեկարգութեան մասին է մեր մտահոգութիւնը: Տկարութեանց եւ անհամաձայնութեանց հարկ է յաղթահարել, քան թէ քմահաճօքէն տարուած «անկարելի» դարձնել ամուսնական կեանքի բնականոն ընթացքը՝ օրինակ ըլլալով զաւակներուն:

Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան մէջ կենսական դեր ունի ընտանիքը իր օրինակելի դիրքով ու պատուով ուրկէ բարեկարգութիւնը կը սկսի, մինչ անկարգու-

թիւնը՝ ամուսնալուծումէն եւ անոր յոռի հետեւանքներէն: Ներկայ դարուս դժբախտաբար աշխարհի օրէնքներուն մէջ ամենէն թոյլ, ապերասան ու անբարոյ օրէնքն է որ կը տիրէ արեւմտեան երկիրներուն մէջ պետական վճիռով, բոլորովին արհամարհելով բարոյական եւ կրօնական սահմանները: Գրիչի փոքրիկ հարուածով մը ամուսնանան, եւ եթէ հարկ ըլլայ օրէնքին տառը գործածելով եւ սրբազան խորհուրդը անարգելով կ'ամուսնանան: Հայ Եկեղեցւոյ Մաշտոցը (Միսարանը) եթէ տեղի կուտայ միայն երկրորդ ամուսնութեան, այդ պէտք է հասկնալ այր-իացեալ ամուսիններու կրկին ամուսնութեամբ, եւ ոչ այլ պատճառով, բացառութեամբ «Ձեկուցում»ին յայտնած վերոյիշեալ պարագաներուն:

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄ

ԱՅՍՈՒ ՀՈԳԵԿԱՆ ՑՆԾՈՒԹԵԱՄԲ
ԿԸ ՀԱՂՈՐԴԵԼՔ ԹԵՄԻՍ ՀԱՒԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒԹ, ԹԷ
ՍՈՒՐԲ ԾՆԱԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ

ԶԻՆԳՏԱԲԹԻ, ՅՈՒՆՈՒԱՐ 3ԻՆ, 2019
ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԸ 10:00ԻՆ

ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԵՐՇ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆԻ
ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ ԵՒ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՀՈԳԵՈՐԱԿԱՆՆԵՐՈՒԻ

ՄԻՇԸՆ ՀԻԼՁԻ ՄԷՋ ԳՏՆՈՒՈՂ
ԱՐԱՐԱՏ ՀԱՅ ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՏԱՆ ՄԷՋ
ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ ԵՒ ՔԱՐՈՋԷ՝

ԱՐԺԱՆԱՇՆՈՐՀ Տ. ԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱՅ ԽԱՉԱՏՐԵԱՆ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԱՒԱՐՏԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՋԱՆ ՀՈՐ
ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ ՊԻՏԻ ԿԱՏԱՐՈՒԹԻ ԶՐՕՐԶՆԷՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՆ

ԱՊԱ ԶՐՕՐԶՆԷՔ ՊԻՏԻ ԿԱՏԱՐՈՒԹԻ ՆԱԵՒ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԲԱԺԻՆ ՄԷՋ

ԻՄԿ ԿԷՍՕՐԷ ՅԵՏՈՅ ԺԱՄԸ 3:30ԻՆ
ԻԿԸՆ ՌԱՔԻ ԱՐԱՐԱՏ ՏԱՆ ՄԷՋ

ՆՈՅՆՊԷՍ ՊԻՏԻ ԿԱՏԱՐՈՒԹԻ ԶՐՕՐԶՆԷՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՆ

ՀԱՒԱՏԱՅԵԱԼՆԵՐ ՄԻՐՈՎ ԿԸ ՀՐԱԻՐՈՒԹԻՆ
ԱՐԱՐԱՏ ՀԱՅ ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՏՈՒՆ
ՄԻԱՍՆԱԲԱՐ ԱՂՕԹԵԼՈՒ ԵՒ
ԼՍԵԼՈՒ ՕՐՈՒԱՆ ՀՈԳԵՈՐ ՊԱՏԳԱՄԸ

Փարաճանովի Ցուցահանդեսի Խոշոր Պաստառը Պոլսոյ Օդակայանին Մէջ



Պոլսոյ Փերա թանգարանին մէջ կը շարունակուի աշխարհահռչակ հայ արուեստագէտ, դերասան եւ բեմադրիչ Սերկէյ Փարաճանովին (Սարգիս Փարաճանեանց) նուիրուած ցուցահանդէսը:



Պոլսոյ Աթաթուրքի անուան միջազգային օդակայանին մէջ մեծ արուեստագէտի նկարով եւ «Փարաճանով, Սարգիսի հետ» գրութեամբ տեղադրուած է մեծ ցուցապատառ, որ տարբեր երկիրներէ ժամանող զբօսաշրջիկներուն, նաեւ թուրքիոյ քաղաքացիներուն կը տեղեկացնէ Փերա թանգարանին մէջ բացուած ցուցահանդէսի մասին:

Իրականութիւն դարձած է Պոլսոյ Փերայի թանգարանի եւ Երեւանի Սերկէյ Փարաճանովի թանգարանի համագործակցութեան շնորհիւ: Այն նուիրուած է մեծ վարպետի ծննդեան 95-րդ ամեակին:

Պոլսահայ լրագրող եւ հասարակական գործիչ Ռաֆֆի Հերմոն Արաքսը իր ֆէյսպուքեան էջին մէջ տեղադրած է օդակայանին մէջ փակցուած մեծադիր ցուցապատառի լուսանկարը:

Ցուցահանդէսը այցելուներուն համար բաց պիտի ըլլայ 2018-ի Դեկտեմբերի 13-էն մինչեւ 2019-ի Մարտի 17-ը:

«ԶԱՐՄԱՆԱԳԱՆ» 2019 Արձանագրութիւնները Սկսած են

«Զարմանագան» 2019՝ արեւմտահայերէնով ամառնային ծրագիրը տեղի պիտի ունենայ Ֆրանսայի Ալպեան լեռներու շրջանը, Յուլիս 12-էն մինչեւ Օգոստոս 7: Պիտի ունենայ միաժամանակ երեք բաղադրիչներ.

- 10-էն 17 տարեկան պատանիներու համար նախատեսուած ստեղծագործական ծրագիր մը,
- 18-էն 24 տարեկան երիտասարդներու համար նախատեսուած ստեղծագործական յայտագիր մը,
- Պատանիներու համալսարանական ծրագիր մը, ուղղուած Սփիւռքի արեւմտահայերէնի ուսուցիչներուն, ու վաւերացուած Փարիզի Արեւելեան լեզուներու եւ քաղաքակրթութիւններու ազգային հիմնակին (Ինստիտուտ) կողմէ:

Զարմանագան 2019

Արեւմտահայերէն ամառնային խոսքով ծրագիր. Ֆրանսայի Ալպեան լեռնային շրջանին մէջ: Ցրագիրը բաց է Ափիտոյի բոլոր պատանիներուն եւ երիտասարդներուն:

10-17 տարեկաններու համար՝ 12 Յուլիս - 7 Օգոստոս 2019

18-24 տարեկաններու համար՝ 9 Յուլիս - 8 Օգոստոս 2019

Արեւմտահայերէն «Յովիտ» 19.01.2019 23:00 GMT

Քաղաքացիական ծրագրի մասին տեղեկանքները կ'ընենք մեր կայքէջէն: www.zarmanyagan.com

տասարդներուն: Տրամադրելի տեղերու թիւը սահմանափակ է:

Նկատի պէտք է ունենալ նաեւ հետեւեալ պարագան. երիտասարդներու խումբին մասնակիցները անհրաժեշտ է որ գիտնան առնուազն միջին մակարդակով հայերէն մը:

Իսկ համալսարանական խոսքեալ ծրագիրը, գոր պիտի վարեն մասնագէտ դասատուներ, 15 ուսուցիչ միայն կ'ընդունին: Ծրագիրը կ'առաջարկէ մանկավարժական աշխատանքներու մօտեցումներու եւ առարկաներու վրայ հիմնուած դասախօսութիւններ եւ խմբային աշխատանքներ:

Արձանագրութեան եւ յաւելեալ տեղեկութիւններու համար այցելուե՛ք:

Պատանիները եւ երիտասարդները իրենց տարիքին համաձայն գանազան աշխատանոցներու պիտի մասնակցին: Ասոնց կարգին՝ տեսողական եւ լսատեսողական արուեստներ, երաժշտական եւ մարմնային արտայայտութեան զարգացում, թատերական խաղեր, ազատ գրութեան եւ գրական ընթերցումներու նուիրուած նիստեր, խմբային եւ մարզական խաղեր, բնութեան մէջ պտոյտներ եւ ճամբորդութիւններ:

Բոլոր նիստերուն ու աշխատանոցներուն ընթացքին՝ չարաբերութեան եւ հաղորդակցութեան լեզուն պիտի ըլլայ հայերէնը, մասնագէտ ու տաղանդաւոր ուղեկիցներու ղեկավարութեամբ:

«Զարմանագան»ը բաց է Սփիւռքի պատանիներուն եւ երի-

Սամցիտ Զաւախքուն Բացուեց Զերթական Կրթամշակութային Կենտրոնը



2018 թուականի Դեկտեմբերի 23-ին, հանդիսապետութեամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Գրշ. Տէր Վազգէն եպս. Միրզախանեանի, Ախալցիխէ քաղաքում, Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցուն կից շինութիւնում, բացուեց Վարդգէս Սուրէնեանցի անուան կրթամշակութային եւ երիտասարդական կենտրոն:

Այնուհետեւ թեմակալ առաջնորդի նախագահութեամբ կատարուեց կենտրոնի օրհնութեան կարգ, որից յետոյ Վազգէն Սրբազանն իր շնորհաւորանքը եւ օրհնութիւնը բերեց կենտրոնի բացման առիթով եւ բարձր գնահատեց հոգեւոր տեսուչ Յակոբ աբեղայի նախաձեռնութիւնները:

Օրը տօնական էր, հանդիսաւոր արարողութեանը մասնակցում

Վիրահայոց թեմի առաջնորդն իր գնահատանքը յայտնեց նաեւ Ախալցիխի իշխանութիւններին



էին Վրաստանի խորհրդարանի պատգամաւոր Գիորգի Կոպաձեն, Ախալցիխի քաղաքապետ Զագա Մելիքիձեն, Սակրեբուլոյի նախագահ Գէլայ Նոզաձեն: Ներկայ էին նաեւ Ախալցիխի, Նինոծմինդայի եւ Ախալքալաքի հայ մտաւորականութեան ներկայացուցիչներ, պատգամաւորներ, համայնքային գործիչներ, Առաջնորդարանի, Թեմի պաշտօնէութիւնը:

հայութեան հանդէպ դրսեւորած ուշադրութեան եւ քաջալերանքի համար:

բացման խօսքով հանդէս եկան Ախալցիխի եւ Բորժոմիի տարածաշրջանների հոգեւոր տեսուչ հզր. Տէր Յակոբ աբեղայ Սահակեանը, պատգամաւոր Գիորգի Կոպաձեն, Նինոծմինդայի Ռաֆայէլ Զավախ կենտրոնի տնօրէն Ժորա Սիխչեանը, Ախալցիխի սակրեբուլոյի սոցիալական, բժշկական, սպորտի, մշակութի եւ երիտասարդական կոմիտէի նախագահ Համբարձում Բաբոյեանը եւ այլք:

Կենտրոնում գործելու են երգի, պարի, զեղազիտութեան, Մայր Եկեղեցու պատմութեան ուսուցման խմբակներ: Կենտրոնի տնօրէն նշանակուեց Ասյայ Եպրանոսեան-Բաբոյեանը:

Բանախօսները ողջունեցին թեմի նախաձեռնութիւնը եւ մաղթեցին գործերին յաջողութիւն, յոյս յայտնեցին, որ այս կենտրոնի գործունէութեամբ Ախալցիխի հայութիւնը հնարաւորութիւն կունենայ պահպանելու իր ինքնութիւնը, զարգացնելու հոգեւոր-մշակութային կեանքը:

Նորաբաց կենտրոնում գողտրիկ համերգային ծրագրով հանդէս եկան Ախալցիխի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու Ախալցիխի երգի-պարի համոյթը, պարուսույց Վերոնիկա Համբարեանի, Ծղալթբիլայի հանրային դպրոցի, Նոր շէնե համոյթը, պարուսույց Արմինէ Ալվազեանի ղեկավարութեամբ:

Վիրահայոց թեմի առաջնորդին Ախալցիխում ընկերակցում էին Սբ. Գէլորդ առաջնորդանիստ եկեղեցու հոգեւոր հովուի օգնական հովիւ Տէր Կիրակոս Սիմոնեանը եւ հայարտունե կենտրոնի ղեկավար Եվգենյայ Մարկոսեանը:

Վարդգէս Սուրէնեանցե կենտրոնը թուով չորրորդն է Սամցիտ Զաւախքի եւ Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդութեան մէջ: Նմանատիպ կենտրոններ գործում են Ախալքալաքում, Նինոծմինդայում եւ Արակովայ գիւղում:

SYRIAN ARMENIAN RELIEF FUND

Save Support Sustain

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianrelieffund.org

«Արարատ» Ամսագրի 150-ամեակին Նուիրուած Գիտաժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մէջ



Դեկտեմբերի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ եւ «Վաչէ եւ Թամար Մանուկեան» Մատենադարանի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ «Մայր Աթոռի գիտական հսկան» թեմայով գիտաժողով՝ նուիրուած «Արարատ» ամսագրի 150-ամեակին: «Արարատ» ամսագիրը՝ հիմնադրուած 1868 թուականին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաջին պաշտօնական հայագիտական պարբերականն էր կոչկատու, որը մեծապէս նպաստել է գիտութեան զարգացմանը:



մասնակիցներին իր օրհնութիւնը փոխանցեց Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Այսօր դուք համախմբուել էք ձեր գեղոյցներով ու քննարկումներով վերարժեւորելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտօնական ամսագրի նշանակալի վաստակն ու ժառանգութիւնը: Երջանկալիշատակ Գեւորգ Դ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրօք եւ նրա խրախուսմամբ հիմնադրուած «Արարատ» ամսագիրը հարիւր յիսուն տարիներ առաջ կարեւոր առաքելութեան լծուեց ազգային-եկեղեցական մեր անդաստանում: Ինչպէս նշուում է ամսագրի առաջին համարին նախաբանում, «Արարատի» կարեւոր համարեց «ՆերՈւժ» ծրագրի իրագործումը Սփիւռքի հետ յարաբերութիւններու զարգացման ծիրէն ներս: Ան մասնաւորապէս նշեց. «Չեմ չափազանցներ, եթէ ըսեմ, որ «ՆերՈւժ» ծրագիրն առանցքային նշանակութիւն պիտի ունենայ Հայաստանի եւ սփիւռքի միջեւ գործակցութեան ծիրէն ներս: Մեր պատկերացմամբ՝ սա Հայաստան-Սփիւռք գործակցութեան փիլիսոփայութեան սկիզբն է, առաջին քայլն է: Ասիկա ստեղծարար ու նորարար միտք ունեցող սփիւռքահայերու համար է, որ երիտասարդները կարենան բնակութիւն հաստատել Հայաստանի մէջ, կեանքի կոչեն իրենց գործարար-գաղափարները, եւ այս առաջին քայլն է ուժեղ Հայաստան, ուժեղ Սփիւռք ունենալու համարե: Փոխվարչապետի պաշտօնակատար Տիգրան Աւինեան իր ելոյթին մէջ նշեց, որ կառավարութեան հիմնական նպատակներէն մէկը անտեսական յեղափոխութեան իրականացումն է: ««ՆերՈւժ»-ը հիմք կը դնէ Հայաստան-Սփիւռք նոր որակի համագործակցութեան:



լաւագոյններից մէկն է թէ՛ որպէս հայ կրօնական մամուլ եւ թէ՛ որպէս լրագրութեան պատմութեան մէջ բովանդակալից, իսկ աւանդույթով երկարակեաց: Նա նաեւ ընդգծեց, որ Մայր Աթոռի պաշտօնաթերթը կարեւոր դեր է խաղացել Հայ Եկեղեցու, կրօնի, բարոյագիտութեան եւ այլ յարակից խնդիրների ուսումնասիրման գործընթացում? Խոշոր աւանդ ունենալով հայագիտութեան զարգացման գործում: Այնուհետեւ գիտաժողովի

յանձնառութիւնն էր կրօնական գիտելիքների մատուցմամբ, ներկայացուող ուսումնասիրութիւններով ու յօդուածներով նպաստել ազգի բարոյական ու հոգեւոր դաստիարակութեանը: Ամսագիրը կարեւոր ներդրում ունեցաւ հայ աստուածաբանական մտքի, հայագիտութեան ու պատմաբանութեան զարգացման գործում: Մեծանուն հոգեւորա-

Երեւանի Մէջ Մեկնարկեց Սփիւռքի Նախարարութեան «ՆերՈւժ» Սթարթափ Ծրագիրը



Դեկտեմբեր 16-ին «ՆերՈւժ» ծրագրի բացման հանդիսաւոր արարողութեան ներկայ էին ՀՀ փոխվարչապետի պաշտօնակատար Տիգրան Աւինեան, կառավարութեան անդամները, սփիւռքի նախարարի պաշտօնակատար Մխիթար Հայրապետեան, IDEA հիմնադրամի տնօրէն Բաֆֆի Բաղձեան, Հայաստանի գիտութեան եւ արհեստագիտութիւններու հիմնադրամի (FAST) գործադիր տնօրէն Արմէն Օրուջեան եւ այլք: Ողջունելով ներկաները՝ սփիւռքի նախարարի պաշտօնակատար Մխիթար Հայրապետեան

Առաջին անգամ Հայաստանը կ'առաջարկէ ֆինանսական հնարաւորութիւններ, մասնագիտական ուսուցում եւ լայն գործընկերային ցանց ստանալու հնարաւորութիւն Աւստրալիայէն մինչեւ Հոլանտա, ԱՄՆ-էն մինչեւ Չինաստան տարածքին մէջ սփռուած 27 երկիրներու 71 սթարթափներուն: Առաջին անգամ արտասահման բնակող մեր հայրենակիցները Հայաստան կու գան ոչ միայն արեան կանչով կամ զբօսաշրջութեան նպատակով, այլ այն պատճառով, որ հայրենիքը անոնց հնարաւորութիւն կու տայ իրենց



կարեւոր համարեց «ՆերՈւժ» ծրագրի իրագործումը Սփիւռքի հետ յարաբերութիւններու զարգացման ծիրէն ներս: Ան մասնաւորապէս նշեց. «Չեմ չափազանցներ, եթէ ըսեմ, որ «ՆերՈւժ» ծրագիրն առանցքային նշանակութիւն պիտի ունենայ Հայաստանի եւ սփիւռքի միջեւ գործակցութեան ծիրէն ներս: Մեր պատկերացմամբ՝ սա Հայաստան-Սփիւռք գործակցութեան փիլիսոփայութեան սկիզբն է, առաջին քայլն է: Ասիկա ստեղծարար ու նորարար միտք ունեցող սփիւռքահայերու համար է, որ երիտասարդները կարենան բնակութիւն հաստատել Հայաստանի մէջ, կեանքի կոչեն իրենց գործարար-գաղափարները, եւ այս առաջին քայլն է ուժեղ Հայաստան, ուժեղ Սփիւռք ունենալու համարե: Փոխվարչապետի պաշտօնակատար Տիգրան Աւինեան իր ելոյթին մէջ նշեց, որ կառավարութեան հիմնական նպատակներէն մէկը անտեսական յեղափոխութեան իրականացումն է: ««ՆերՈւժ»-ը հիմք կը դնէ Հայաստան-Սփիւռք նոր որակի համագործակցութեան:

գործարարութիւնը զարգացնելու, նոր գաղափարներ առաջարկելու ու մեծ յաջողութիւններու հասնելու», - ընդգծեց Տիգրան Աւինեան: Ներկաները ողջունեցին եւ բարի երթ մաղթեցին նաեւ IDEA հիմնադրամի տնօրէն Բաֆֆի Բաղձեան եւ Հայաստանի գիտութեան եւ հիմնադրամի (FAST) գործադիր տնօրէն Արմէն Օրուջեան: Անոնք ընդգծեցին, որ գալիք օրերուն ընթացքին մասնակիցները պիտի ծանօթանան Հայաստանի սթարթափային էքսպանսիւններին, անոր իւրաքանչեւութիւններուն եւ առկայ հնարաւորութիւններուն, քննարկումներ կ'ունենան իրենց ոլորտին մէջ յաջողութիւններու հասած մասնագէտներու հետ եւ կը ծանօթանան բազում յաջողակ սթարթափներներու հետ: «ՆերՈւժ»-ի գործընկերներ են FAST եւ IDEA հիմնադրամներ, Impact Hub-ը, Հայաստանի մէջ ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը (UNDP), Հայ-ուսական համալսարանը, «Դէպի Հայք» կազմակերպութիւնը եւ այլն:

Բարեկրթութեան Կանոններ, Որոնք Ձեզ Կ'օգնեն Առօրեայ Կեանքի Մէջ Լաւ Դամարում Ունենալու Դամար

Բարեկրթ ըլլալ կը նշանակէ ունենալ ճիշդ խօսելու կարողութիւն, օգտագործել ճիշդ բառապաշար, գապել յոյգերը, կոկիկ ու մաքուր տեսք ունենալ, դրսեւորել պատրաստակամութիւն:

1) Եթէ դուք ոեւէ մէկուն հետ կը զբօսնէք ու ան կը բարեւէ իր ծանօթներուն, դուք նոյնպէս պէտք է ողջունէք, նոյնիսկ եթէ այդ մարդը առաջին անգամ կը տեսնէք:

2) Եթէ դուք այլ մարդու ներկայութեամբ անընդհատ զբաղած էք հեռախօսով, ան կրնայ մտածել, որ ձեզի համար ձանձրալի ու անհետաքրքրական մէկն է: Ձեզ լիովին նուիրեցէք գրուցակիցին:

3) Ակնապիշ մի նայիք մարդոց, մի ծիծաղիք ու ձեռք ձայնը մի բարձրացնէք:

4) Եթէ ներողութիւն խնդրած էք եւ ատիկա ընդունուած է, երբեք մի կրկնէք միեւնոյն սխալը:

5) Միշտ շնորհակալութիւն յայտնեցէք ձեզ օգնող մարդոց, որպէսզի ցոյց տաք, որ դուք կը գնահատէք անոնց օգնութիւնը:

6) Կինը երբեք թոյլ պէտք է

տայ, որ տղամարդը տանի իր պայուսակը, իսկ իր վերնագգեստը դէպի հանդերձարան միշտ պէտք է տղամարդը տանի:

7) Մի դատարկախօսէք հեռաձայնով, այլ պատասխանեցէք միայն կարեւոր գանգերուն:

8) Բարեկրթ տղամարդը հաւասարապէս կը յարգէ ուր կրկնէր:

9) Ոչ մէկ պարագայի քննարկեցէք այս 9 թեմաները՝ տարիք, կրօն, խնդիրներ, պատիւ, գործեր, հարստութիւն, հիւանդութիւններ, նուէրներ եւ ընտանեկան անախորժութիւններ:

10) Անկախ տարիքէն, մասնագիտութենէն ու կարգավիճակէն, երբ որեւէ տեղ կը մտնէք, ողջունեցէք բոլոր ներկաները:

11) Պահեցէք ձեր կեցուածքը: Կծկուած ուսերը յարգանքի ացակայութիւն կը նշանակեն ուրիշներու հանդէպ:

12) Կանայք պէտք է շարունակին օտար մարդոց ներկայութեան, յատկապէս՝ սեղանի շուրջ:

Եւ միշտ յիշեցէք, որ բարեկրթ ըլլալը բոլոր ժամանակներուն ալ նորաձեւ է:

Իմաստուն Մտքեր Կեանքի Պարզութեան Մասին

Եթէ դուք չէք ապրիր այն կեանքով, որ ազատած էք բոլոր անպիտան բաներէն, որմով իրենց կեանքը լեցուցած են շատ մարդիկ, այդ կեանքի մէջ շատ ազատ տեղ կը մնայ կարեւորի համար: Այնտեղ չկան անընդհատ զբաղուածութիւնն ու արագ ընթացքը, այլ կան մտածողութիւնն ու արուեստը, սիրելի մարդոց հետ շփումները, բնութեան մէջ ժամանակ անցընելը եւ մարմնակրթութիւնը:

Ատիկա չի նշանակեր, որ այդ կեանքին մէջ դժուարութիւն ու անկարգութիւններ պիտի չըլլան: Դուք կ'ապրիք աշխարհի վրայ, այլ ոչ անկէ հեռու, ինչպէս վանականները: Դուք ունիք իրեր, սարքեր, եւ դուք պարբերաբար զբաղած էք: Պարզապէս կրճատեցէք այդ ամէնը, որպէսզի կեանքի մէջ տարածութիւն յառաջանայ:

Ի՞նչ կը նշանակէ պարզ կեանքով ապրիլ՝

- Տան ու աշխատավայրի տարածքի մաքրութիւնը կը յանգեցնէ անոր, որ կը մաքրուի նաեւ ձեր գիտակցութիւնը: Այն, ինչ որ ձեզի տեսողականօրէն կը շեղէ, աւելի շատ կը ծանրաբեռնէ ձեզ, քան դուք կը կարծէք:

- Առանց շտապելու խաղաղ առաւօտը բաւական արժէքաւոր բան է: Կանուխ արթնցէք, որպէսզի հանգիստ կարգալու ժամանակ ունենաք, որեւէ բան գրէք, մարզանքով զբաղիք:

- Դուք չէք սկսիր պարզ կեանքով ապրիլ, քանի դեռ չէք հրաժարած շատոնց սովորական դարձած որեւէ բանէ:

- Հրաժարիլը բարդ է, բայց կը դիւրանայ, եթէ զայն փորձէք ընել մէկ ամսուան ընթացքին: Որեւէ բանէ հրաժարեցէք մէկ ամսուան ընթացքին ու տեսէք, որ ձեզի համար հաճելի պիտի ըլլայ:

- Գնումները ընելու հանգստանալ չէ: Անիկա ժամանակի ու գումարի դատարկ վատնում է:

- Եթէ դուք ձեր կեանքը կը լեցնէք շեղող գործօններով, հաւանական է, որ դուք կը վախնաք գիտնալու, թէ ինչպիսին է կեանքը առանց շարունակ համացանցի մէջ ըլլալու, առանց հասարակական ցանցերու, նորութիւններու, հեռախօսի, խաղերու եւ համեղ բաներու:

- Պարզ, ամբողջական, առողջ սնունդը միայն օգտակար չէ, անիկա նաեւ հաճոյք է:

- Դուք պէտք է ժամանակ յատկացնէք կարեւոր բաներու՝ գաւակներուն, ամուսինին կամ կնոջ հետ ժամանակ անցընելուն, որպէսզի արարէք, ստեղծագործէք, մարզանքով զբաղիք: Մնացած ամէն ինչը յետաձգեցէք, սակայն ատոր համար ժամանակ գտէք:

- Պարզ կեանքի հանդէպ թոյլ տուած ամենասարսափելի մեղքը դուն քու վրադ չափազանց շատ պարտաւորութիւններ վերցնելն է:

- Կան որոշ բաներ, որոնցմով պէտք է զբաղիլ գրեթէ ամէն օր՝ կարգալ, գրել, առողջ սնունդ ուտել, խաղալ երեխաներու հետ:

- Այն, ինչ որ կը շեղէ մեզ, շատ գայթակղիչ է, սակայն՝ նաեւ շատ կործանարար:

- Մենք կը գերազանահատենք արդիւնաւէտութեան նշանակութիւնը: Կեդրոնացումը, առաջնայնութիւններն ու արդիւնաւէտութիւնը առաւել կարեւոր են, ինչպէս նաեւ սիրելի մարդու հետ զբօսանքը:

- Եթէ դուք չսորվիք առանց որեւէ բանի վրայ շեղելու՝ լուռ, միայնակ նստիլ խաղաղ սենեակի մէջ, դուք չէք կրնար պարզեցնել ձեր կեանքը:

- Ճանապարհորդելով՝ դուք ձեզ աւելի արգաստ կը զգաք, ոչ այնքան պարտաւորուած ու ծանրաբեռնուած, աւելի քիչ յոգնած: Ատիկա կը վերաբերի ողջ կեանքին:

Երբ ՅարաբերութիւններուՄէջ Ես, Ժամանակդ Այլեւս Ամբողջովին Քուկդ Չէ...

Մարդիկ միշտ ալ ժամանակ կը գտնեն իրենց կեանքի ամենազխաւոր բանին համար: Եւ անոնք միշտ պատրաստ են զոհաբերելու ա՛յն, ինչ կարեւոր չէ: Ամէն ինչ շատ պարզ է: Այնպէս որ, երբ մարդը քեզի կ'ըսէ՝ «Կը ներես, ես ժամանակ չունիմ, չափազանց զբաղած եմ», ատիկա կը նշանակէ, որ ան կ'ըսէ՝ «Դու ան քան կարեւոր չես ինձի համար, որ քեզի համար ժամանակ գտնեմ»:

Միշտ գիտցիր, որ ժամանակը ամենաարժէքաւոր բանն է, որ դու կրնաս տալ կամ ստանալ: Ժամանակը միակ բանն է, որ կարելի չէ գնել, երկարել, փոխել: Մեզի տրուած է կեանքի որոշակի ժամանակահատուած մը, եւ մենք պէտք է առաւելագոյնս օգտագործենք զայն: Ահա թէ ինչու մենք չենք ուզեր ժամանակ վատնել այն բանին վրայ, որ մեզի համար կարեւոր չէ: Ուրեմն, ինչո՞ւ դու ան քան ժամանակ կը ծախսես անոր վրայ, որ ակնյայտօրէն չի պատրաստուիր զայն ծախսելու քեզի համար:

Երբ դուք կը սիրահարիք ու կը սկսիք հանդիպիլ, երկուքդ ալ որեւէ փոխգիշման կ'երթաք: Կը սկսիք ժամանակ գտնել իրարու համար: Երբ դուն յարաբերութիւններու մէջ ես, ժամանակդ այլեւս ամբողջովին քուկդ չէ: Դու ան պէտք է զայն կիսես այլ մարդու հետ: Եւ ապագայ ալ դու ան պէտք է ծրագրաւորես՝ ձեր յարաբերութիւնները հաշուի առնելով: Բայց երբ երկու մարդ սիրահարած են, ատիկա անոնց համար այլեւս խնդիր չէ: Ատիկա նոյնիսկ ուրախութիւն է:

Եթէ Այս Նշանները կը Նկատէք Ձեր Ընկերուհիին Մօտ, Ուրեմն Ան Չափազանց Ծնշուած Կիճակի Մէջ է

Ծանօթ իրավիճակ՝ մօտիկ ընկերուհիի հետ ակնյայտ որեւէ բան տեղի կ'ունենայ: Հաւանաբար պարզապէս գերյոգնածութեան արդիւնք է: Սակայն, եթէ ան յաճախ այդպիսի տրամադրութեամբ է, ամէն ինչ կրնայ աւելի լուրջ ըլլալ, քան կը կարծէք:

- Ձեր ընկերուհին կը վրդովի ամէն առիթով: Մարդոց մեծամասնութիւնը կը կարծէ, թէ ճնշախտը կ'արտայայտուի ամէն ինչ ընկղմող տխրութեամբ: Սակայն մարդակը, ճնշախտի ժամանակ անարդիկ կը զգան զայրոյթ եւ վրդովմունք:

- Կը բողոքէ քունի խախտումէ: Մէկ-երկու անքուն գիշեր տաղանապի պատճառ չէ: Իսկ մշտական անքնութիւնը անհանգստացնող նշան է: Կը պատահի եւ հակառակը՝ դժուար է առաւօտեան արթննալ, մշտապէս քնանալ կ'ուզէ:

- Ցաւերը սկսած են տանջել զինք: Գոյութիւն ունի հզօր կապ մարմնի եւ գիտակցութեան միջեւ: Երբ մարմինը կը փորձէ վերականգնել հոգեկան առողջութիւնը, կրնան ի յայտ գալ անհասկնալի ցաւեր մէջքին եւ մկաններուն մէջ, կրնայ մշտապէս գլխացաւ ըլլալ:

- Առօրեայ շտապները նուազած է: Մշտապէս յոգնած վիճակ, որ քիչ քնանալու կամ աշխատանքի մէջ շատ գործ ունենալու հետեւանք կը համարենք: Վառ նշաններէն է այն, որ մանր խնդիրները սկսած են յոգնեցնել կամ աւելի շատ ժամա-

Երբ կը սիրահարիս, պատրաստ ես ժամանակդ այդ մարդուն տալու: Պատրաստ ես ձգելու ամէն ինչ ու վագելու անոր մօտ, եթէ ան օգնութեան կարիք ունի: Ձէ՞ որ շնորհիւ համատեղ անցուցած ժամանակի կը ստեղծուի այն զգացմունքային կապը, որ կ'ամրացնէ ձեր յարաբերութիւնները: Միտոյ մէջ ներդրած ժամանակի քանակը ուղիղ համեմատական է ձեր յարաբերութիւններու ուժին:

Սակայն, եթէ մարդը շարունակ քեզի համար ժամանակ չունի, ատիկա արդէն անհանգստութեան առիթ է: Եթէ ան քեզի կ'ըսէ, որ չափազանց զբաղած է, կը նշանակէ, որ ան քեզմէ աւելի կարեւոր գործեր ունի: Ատիկա կը նշանակէ, որ առաջնայնութիւններու անոր ցանկին վրայ դու ան առաջին տեղը չես գրաւել:

Ի հարկէ, պէտք է յարգել գուզնկերոջ անձնական ազատութիւնն ու տարածքը: Բայց յարաբերութիւնները աւելի լաւը պիտի ըլլան, եթէ գուզնկերները իրենց ազատութիւնը օգտագործեն՝ ընտրելով ժամանակը միասին անցընելու տարբերակը: Յարաբերութիւնները շատ ժամանակ, ջանքեր ու նուիրուածութիւն կը պահանջեն երկուքէն ալ:

Այնպէս որ, եթէ կը զգաս, որ քեզի համար քիչ է այն ժամանակը, զոր գուզնկերդ կը տրամադրէ քեզի, մի վախնար անոր ըսելու այդ մասին: Մի վախնար աւելի շատ ժամանակ եւ ուշադրութիւն պահանջելու: Մի վախնար խնդրելու, որ քեզ դարձնէ իր կեանքի գլխաւոր մարդը:

նակ կը խլեն, քան՝ առաջ:

- Մեղքի զգացումը կը հետապնդէ զինք: Մշտապէս մեղաւոր զգալը եւ ամէն ինչի մէջ մեղադրել անպիտան ըլլալ, ճիշդ չէ: Եթէ իւրաքանչիւր իրադարձութիւն կտրուկ ինքնաքննադատութիւն կ'առաջացնէ, ատիկա ճնշախտի նշան է:

- Խենթութիւններ: Ոչ-բնական հետաքրքրութիւնը մոլեխաղերով, չափազանցուած սեռային ազատութիւնը եւ այլ չարաշահումները իրականութեան մէջ կրնան ներքին քառուկն ազատելու փորձեր ըլլալ: Այդպիսի փոփոխութիւնը ոչ միայն կարճաժամկէտ թեթեւութեան կը տանի, այլ նաեւ կը ծանրացնէ ճնշախտը եւ կ'երկարացնէ զայն:

- Խնդիրներ ծագած են ուշադրութեան հետ: Ամէն ինչ կը թուի մշուշի մէջ. կը կորսուին բանալիները, փաստաթուղթերը, կը մոռցուին կարեւոր բաները: Չգալիօրէն պակասած է աշխատունակութիւնը եւ դժուար է կեդրոնանալ ընթացիկ խնդիրներու վրայ: Վատ տրամադրութեան պատճառով ուշադրութիւնը նոյնպէս կրնայ նուազիլ, սակայն ճնշախտը նոյնպէս ունի այդպիսի նշան:

Յիշեցէք, որ քան շատ նշան նկատած էք, այդքան մեծ է հաւանականութիւնը, որ ձեր ընկերուհիին պարագան ո՛չ թէ գերյոգնածութիւն է, այլ՝ ճնշախտ:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

Տօնածառի Պատմութիւնից (Մասնակի Յապաւուճներով)



ՎԱՍՍԱՐ ԱԲԵՏԻՍԵԱՆ
(Աշխարհագիտական գիտութիւնների դոկտոր, ուսուցիչ)
(1904 - 1976)

Այսօր առանց տօնածառի դժուար է պատկերացնել Նոր տարին: Այն գարդարում է մեր տներն ու մանկապարտէզները, դպրոցներն ու հրապարակները, եւ դարձել է մանկական հանդէսների խորհրդանիշ:

Ծառի պաշտամունքը գոյութիւն է ունեցել շատ վաղ ժամանակներում, դեռ հեթանոսական շրջանում: Այն համարուել է բնութեան կենդանութեան եւ վերապրումի նուիրագործումն ու սրբագործումը: Մական տարբեր ժողովուրդների մօտ տարբեր ծառեր են օգտագործուել: Ասենք, Հնդկաստանում պաշտել են թզենին, Հռոմում՝ կաղնին, Յունաստանում՝ դափնին ու ձիթենին եւ այլն: Յոյները դափնին ու ձիթենին համարել են իմաստութեան, խաղաղութեան եւ փառքի խորհրդանիշ: Օլիմպիական խաղերի ժամանակ յաղթողներին դափնու եւ ձիթենու պսակներ էին շնորհում:

Հայերի մօտ եւս եղել է անտառի եւ ծառի պաշտամունքը: Ծառերից յատկապէս սրբագործուել են սօսին ու բարդին: Այսպիսով տօնածառի ծագումը կապուում է ծառի պաշտամունքի, ծառի գարդարանքի հետ: Ինչ վերաբերում է մերօրեայ տօնածառին, որի խորհրդանիշը եղեւին է, ապա նրա մեծարումն անցեալում աւելի շատ տարածուած է եղել յատկապէս Հիւսիսային Եւրոպայում, հիմնականում գերմանացիների մօտ: Նրանք եղեւինի դիտում էին որպէս ծառերի պահպան, անտառի, թռչունների եւ գազանների հովանաւորող:

Եղեւնու մեծարումը եւ Նոր տարին գարդարելու սովորութիւնը գերմանացիներից անցաւ Հոլանդա եւ Ռուսաստան: Պետրոս Առաջինը յատուկ օրէնք հրապարակեց, ըստ որի՝ սկսած 1700 թուականից, Ռուսաստանում Նոր տարին նշել Յունուարի 1-ին, Սեպտեմբերի 1-ի փոխարէն: Մտցուեց նաեւ տօնածառի գործածութիւնը: Եղեւնու արագ տարածումը պայմանաւորուած է նրանով, որ գրեթէ բոլոր ժողովուրդների տարեմուտի ամիսը դարձաւ Յունուարը եւ բարեխառն գօտու բոլոր սրբագործուած ծառերը, այդ թւում նաեւ հայոց սօսին ու բարդին, որոնք ձմռանը տերեւաթափ են լինում, իրենց տեղը գիշերցին յաւերժ կանաչ եղեւնուն: Քանի որ եղեւին տաք երկրներում տարածուած չէ, դրա համար էլ նրան փոխարինում են այդ տեղերում աճող, նոյնպէս նուիրագործուած այլ ծառատեսակներ: Ճապոնացիները բալենին են նախընտրում, վիետնամցիները՝ բամբուկը:

Ժամանակի ընթացքում մոռացւեցին թէ՛ հայկական, թէ՛ օտար աւանդութիւնները ծառի պաշտամունքի մասին, բայց տօնածառը մնաց որպէս վերակենդանացած լեզու, աշխարհի երեխաների մշտական ուրախութեան ուղեկից:

Ձնջել Ենթ Հայաստանի Եւ Սփիւռքի Միջեւ Սահմանը

Շարունակուած էջ 6-էն

պէս նաեւ իրաւական ու հարկային անվճար խորհրդատուութիւն, անդամակցութիւն FAST ստարտափ-ստուգիչին՝ չորս ամիս շարունակ ամբողջական «քուէչինգի» ծրագրերից եւ աշխատանքային տարածքից օգտուելու հնարաւորութեամբ, «Impact Hub Yerevan» ընկերութիւնում ութ ամսուայ փորձառութեան հնարաւորութիւն եւ այլն: Ֆինանսաւորումն իրականացուելու է ՀՀ պետական բիջնէից եւ ՀՀ օրէնքով չարգելուած այլ աղբիւրներից, մասնաւորապէս մի շարք դոնոր կազմակերպութիւնների աջակցութեամբ:

Քառօրեայ միջոցառման գերակայ նպատակն է հաջողի երիտասարդ ձեռներէջների համար Հայաստանում բիզնեսով զբաղուելու հարթակի եւ հնարաւորութիւնների ստեղծումը, ստարտափային էկոհամակարգի ստեղծման համար բարենպաստ միջավայրի ապահովումը, առանցքային ստարտափային բիզնեսի զարգացման հմտութիւնների կիրառումը, համագործակցութեան եւ ֆինանսաւորման համար հնարաւորութիւնների ընձեռումը: Ծրագրի թիրախային ոլորտներն են գիւղատնտեսութիւնը, զբօսաշրջութիւնը, նորարար տեխնոլոգիաները:

«ԶԱՐՄԱՆԱԶԱՆ» 2019

Շարունակուած էջ 15-էն

ցելեցէ՛ք www.gulbenkian.pt/armenian-communities կայքէջը:

Արձանագրութիւնները պէտք է կատարուած ըլլան մինչեւ 19 Յունուար 2019, Կրինուէչի ժամով ժամը 23:00-ին:

Բոլոր արձանագրողներուն հետ կապ պիտի հաստատենք 9 Փետրուար 2019-ին:


«Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը 2017-ին ձեռնարկեց

«Զարմանազան» մանկավարժական յայտագիրին, որպէս արեւմտահայերէնի վերաշխուժացման ծրագրի մէկ բաժինը: Ան կազմակերպուած է Լիոնի Հազար ու մէկ աշխարհ ընկերակցութեան եւ Փարիզի Արեւելեան լեզուներու եւ քաղաքակրթութիւններու Ազգային Հիմնարկին համագործակցութեամբ: «Զարմանազան» ծրագիրը վաւերացուած է Ֆրանսայի Երիտասարդութեան եւ մարզանքներու նախարարութեան կողմէ:


VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան Եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԷԱՆԻՆ



Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com



NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

MEMBER

Garine Depoyan

626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepyan@gmail.com

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին**

T: (626) 797-7680 massis2@earthlink.net

We're Hiring!

Full time position for
restaurant experienced persons

MUST APPLY IN PERSON AT
Shawerma Masters
Ask for Gary
1802 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104
(626) 616-3323

Սիրուած Ընկերոջ Յիշատակին

Միսաք էքմէքճեանը «Հայք» թեմի հայկական ակումբի հիմնադիր անդամներից էր, եւ իր խաղը աչքի էր ընկնում նրբագեղութեամբ՝ իր բնավորութեանը յարիր: Նա համակ բարութիւն էր՝ բարեսիրտ, բարեացակամ, բարեկիրթ, սակայն նաեւ անգիջում առաջամարտիկ, երբ սկզբունքային հարցեր էին քննարկուում ակումբի գործունէութեան մասին: Բացի մարզական աշխարհից, նա շատ ակտիւ էր նաեւ հասարակական կեանքում: Լինելով Արշակ Տիրգրանեան դպրոցի խնամակալ մարմնի անդամ, նա մի առիթով դպրոցի մրցանակաբաշխութեան դատակազմի (Ժուրի) մէջ ընդգրկել էր «Հայք» ակումբի անդամներից մէկին:

Միսաք էքմէքճեանը միշտ պիտի լիշուի որպէս մեր ակումբի տիպար ազնուական անդամ:

Այս օտար ավերում թող հողը թեթեւ լինի իր շիրիմի վրայ: «Հայք» թեմիսի ակումբ

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

Ընկ. ՏՕԲԹ. ՄԻՍԱԲ ԷՔՄԷՔՃԵԱՆԻ մահուան տխուր առթիւ՝ ՄԴՀԿ Կլէնտէլի «Արսէն Կիտուր» մասնաճիւղը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի աջրիին, զաւակներուն եւ համայն պարագաներուն:

Փոխան ծաղկեպսակի այս առթիւ «Մասիս» շաբաթաթերթին կը նուիրէ 100 տուար:

ՑԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ

Ընկ. ՏՕԲԹ. ՄԻՍԱԲ ԷՔՄԷՔՃԵԱՆԻ մահուան տխուր առթիւ՝ «Մասիս» շաբաթաթերթի վարչական եւ խմբագրական կազմերուն կողմէ կը յայտնենք մեր խորագրաց ցաւակցութիւնները՝ հանգուցեալի աջրիին, զաւակներուն եւ համայն պարագաներուն:

«ՄԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը խորապէս կը ցաւի ՏՕԲԹ. ՄԻՍԱԲ ԷՔՄԷՔՃԵԱՆԻ մահուան գոյժին առթիւ: Մեր անդամներուն եւ համակիրներուն անուշով մեր ցաւակցութիւնները կը յայտնենք իր աջրիին՝ Գոհարին, զաւակներուն եւ թոռներուն, քրոջ եւ քերայրին Տէր եւ Տիկին Աւետիս եւ Ալին Մակարեաններուն եւ բոլոր ազգականներուն ու հարազատներուն:

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

ՏՕԲԹ. ՄԻՍԱԲ ԷՔՄԷՔՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով Կիլիկեան Բարեգործական Միութեան վարչութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի աջրիին զաւակներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն. առ այդ \$100 կը նուիրէ «Մասիս» ֆոնտին:

«Արարատ» Ամսագրի 150-ամեակ

Շարունակուած էջ 16-էն

կանները Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի գլխավորութեամբ նոր սերնդի հոգեւորականները, Եւրոպայում կրթութիւն ստացած երիտասարդ եկեղեցականները հանդէս եկան դաւանաբանութեան, ինչպէս նաեւ ընդհանուր աստուածաբանութեան վերաբերեալ գիտական լուրջ յօդուածներով, նշանաւոր աստուածաբանների աշխատութիւնների թարգմանութիւններով: «Արարատի» էջերում չիշարժան վաստակ թողեցին նաեւ նշանաւոր հայագետները: Ամսագրի մեծարժէք նիւթերի ցանկը հարստացրել են ձեռագրագիտութեան, մանրանկարչութեան, համեմատական բնագրերի, արուեստի ու մշակութի վերաբերեալ հրատարակումները: Դեռեւս այդ շրջանում, երբ Մայր Աթոռի պաշտօնական գրութիւններում գլխավորապէս գրաբարի գործածումն էր սահմանուած, «Արարատ» ամսագրի համար նախընտրելի համարուեց զրաբարին մերձ աշխարհաբար լեզուի օգտագործումը, որպէսզի այն ընթերցողների աւելի լայն շրջանակի հասն լինի:

Յատկանշական է նաեւ, որ

«Արարատ» ամսագիրը լոյս էր տեսնում անպիսի մեծանուն հոգեւորականների խմբագրութեամբ, որպիսիք էին Աբէլ արքեպիսկոպոս Միթիթարեանը, Խորէն վարդապետ Ստեփանեան, Կարապետ վարդապետ Տէր-Մկրտչեանը, Գալուստ Տէր-Մկրտչեանը, Գարեգին վարդապետ Յովսէփեանը եւ ուրիշներ: Մեր խորին յարգանքն ու խոնարհումն ենք բերում երանաշնորհ Գեորգ Դ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ամսագրի վաստակաշատ խմբագիրների եւ «Արարատի» բոլոր երախտաւորների լոյս չիշատակի առջեւ:

Գոհունակութեամբ ենք անդադառնում, որ հրատարակուող նիւթերի յատուկ ընտրութեամբ «Արարատ» ամսագիրը դարձաւ այդ ժամանակաշրջանում կովկասում առաջին գիտական լուրջ հանդէսը, որի շուրջ համախմբուած հայ աստուածաբան հոգեւորականները, գիտնականները, գրողները կարեւոր աւանդ բերեցին գիտութեան ճիւղերի զարգացմանը: Այսօր էլ Արարատ ամսագրի հարուստ գիտական նիւթերը, նաեւ կաթողիկոսական կոնդակների ու կարգադրութիւնների, Սինոդի գրագրութիւնների, թեմերի, գաղթավայրերի, ազգագրութեան վերաբերեալ տեղեկութ-

իւնները օգտաշատ գիտելիքների աղբիւր են ընթերցողների եւ ուսումնասիրողների համար», - ասաց Վեհափառ Հայրապետը՝ իր գնահատանքը յայտնելով նաեւ մատենադարանի տնօրինութեանը եւ գիտաժողովի իրականացմանը բարի նպաստ բերած բոլոր անձանց:

Հայրապետական պատգամից յետոյ գիտաժողովն սկսեց իր աշխատանքը: Առաջին նիստին զեկոյցներով հանդէս եկան ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտի տնօրէն, Բ.Գ.Պ. Վարդան Դեւրիկեանը (««Էջմիածնականութեան» գաղափարի արծարծումը «Արարատ»-ի էջերում»), ԵՊՀ հայ գրականութեան պատմութեան ամբիոնի դասախօս, Բ.Գ.Պ. Սերժ Սրապիոնեանը (««Արարատ»-ը՝ Մայր Աթոռի տարեգիրք»), ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան, Բ.Գ.Պ. Նաղաշ Մարտիրոսեանը («Հրապարակախօսութիւնը «Արարատ» ամսագրում»), ՀՀ Ազգային գրադարանի փոխտնօրէն Հայկանուշ Ղազարեանը (««Արարատ»-ի անդրարդարձը գրադարանային ոլորտին») եւ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի տնօրէն, Բ.Գ.Պ. Վիկտոր Կատուալեանը (««Արարատ» ամսագիրը հայ գրերի գիտի եւ տպագրութեան համագրային մեծ յոբելեանի տօնակատարութեան մասին»):

Երկրորդ նիստին զեկոյցեցին Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի գիտաշխատող, Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագէտների միութեան անդամ Արփի Վարդուհանը («Կոմիտասը եւ «Արարատ» հանդէսը»), ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտի առաջատար գիտաշխատող, Բ.Գ.Պ. Սուսաննա Յովհաննիսեանը («Յովհաննէս Թումանեանը եւ «Արարատ» ամսագիրը. (խմբագիրներ Գալուստ Տէր-Մկրտչեանի եւ Գարեգին վարդապետ Յովսէփեանի բարեկամութեան պատմութիւնից»)), «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արփինէ Չանթիկեանը («Կրօնագիտական-աստուածաբանական յօդուածները «Արարատ» ամսագրում»), ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտի հայ հին եւ միջնադարեան գրականութեան բաժնի աւագ գիտաշխատող, Բ.Գ.Պ. Լուսինէ Վարդանեանը («Շարականի ուսումնասիրութիւնները «Արարատ» ամսագրի էջերում»), Հայաստանի ազգային արխիւի կինոֆոտոֆոնոյ փաստաթղթերի եւ ապահովագրական պատճէնների մասնաճիւղի վարիչ, Կ.Գ.Պ. Աւագ Յարութիւնեանը («Հայոց Յեղասպանութեան եւ Հայկական հարցի թեման «Արարատ» ամսագրի էջերում») եւ ՀՀ Սփիւռքի նախարարութեան Համահայկական ծրագրերի վարչութեան մշակութային, սպորտի եւ երիտասարդական ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ, Կ.Գ.Պ. Կարէն Մկրտչեանը («Պարսկաստանի հայ գաղթածախը «Արարատ» ամսագրի էջերում 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին»):

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----

ՄԱՐՁԱԿԱՆ

Հայաստանի Լաւագոյն Մարզիկների Տասնեակը



Դեկտեմբերի 21-ին կայացաւ «Տարուայ 10 լաւագոյն մարզիկը» մրցույթի լրատուամիջոցների եւ նախարարութիւնում գրանցուած գլխաւոր մարզիչների, ազգային ֆեդերացիաների ներկայացուցիչների բաց քուէարկութիւնը, որին մասնակցեց 19 լրատուամիջոց եւ 26 մարզիչ-մասնագէտ:

Ըստ լրատուամիջոցների ներկայացուցիչների եւ մարզիչ-մասնագէտների, տարուայ լաւագոյն տասնեակը ձեւաւորուել է հետեւեալ կերպ.

- Սիմոն Մարտիրոսեան (44 ձայն, ծանրամարտ)
- Արթուր Ալեքսանեան (44 ձայն, յունահռոմեական ոճի ըմբշամարտ)
- Ֆերդինանդ Կարապետեան (42 ձայն, Զուդօ)
- Գոռ Մինասեան (41 ձայն, ծանրամարտ)
- Մաքսիմ Մանուկեան (40 ձայն, յունահռոմեական ոճի ըմբշամարտ)
- Վլադիմիր Յարութիւնեան եւ Լեւ Սարգսեան (39 ձայն, Զրացատկ)
- Էդգար Ստեփանեան (38 ձայն, հեծանաւասպորտ)
- Արթուր Թովմասեան (28 ձայն, սպորտային մարմնամարզութիւն)
- Արթուր Շահինեան (23 ձայն, յունահռոմեական ոճի ըմբշամարտ)
- Հենրիխ Մխիթարեան (20 ձայն, ֆուտբոլ)

Ծանրամարտիկ Սելինէ Դալուզեանը Որակագրկուել է

Ծանրամարտի միջազգային ֆեդերացիան հերթական դոպինգ ստուգումներից յետոյ անժամկէտ որակագրկել է 2012թ օլիմպիական խաղերի չեմպիոն, ուկրաինացի Ալեքսեյ Տորոխախին ու բրոնզէ մեդալակիր Վալենտին Խրիստովին (Ադրբեջան):




Այդ մասին յայտնուել է միջազգային ֆեդերացիայի պաշտօնական կայքը: Մարզիկների անալիզների վերատուգման արդիւնքում նրանց արեան մէջ յայտնաբերուել են արգելուած դեղամիջոցներ:

Միջազգային ֆեդերացիայի «սեւ ցուցակում» յայտնուած հինգ ծանրորդներից մէկը նաեւ Հայաստանը ներկայացնող Մելինէ Դալուզեանն է: Եւրոպայի կրկնակի չեմպիոնը նոյնպէս անժամկէտ որակագրկուել է միջազգային ֆեդերացիայի կողմից: Նշենք, որ 2012թ օլիմպիական խաղերում Մելինէ Դալուզեանը զբաղեցրել էր 8-րդ տեղը:

Զիդանն Առաջարկ է Ստացել «Մանչեսթեր Եունայթեդից»

«Մանչեսթեր Եունայթեդն» առաջարկ է արել Մադրիդի «Ռէալի» նախկին գլխաւոր Զիդանին Զիդանին, որն անցած մրցաշրջանի աւարտից յետոյ գործազուրկ է:



As-ի համաձայն՝ ֆրանսիացի մասնագէտը մտածում է անգլիական ակումբի առաջարկի վերաբերեալ:

Նշուել է, որ Զիդանը ցանկանում է աշխատել Թուրինի «Եուվենտուտում» կամ Ֆրանսիայի ազգային հաւաքականում, սակայն հասկանում է, որ առաջիկայում այդ տարբերակներն այնքան էլ իրատեսական չեն:

Յիշեցնենք, որ «Մանչեսթեր Եունայթեդն» օրեր առաջ հեռացրել էր ժողով Մուրրինյոյին, որին մինչեւ այս մրցաշրջանի աւարտը կը փոխարինի թիմի նախկին ֆուտբոլիստ, նորուէզացի մասնագէտ Ուլէ-Գունար Սուլշերը:

Զիդանին Զիդանի ղեկավարութեամբ «Ռէալը» նախորդ երեք մրցաշրջաններում երեք անգամ դարձաւ Չեմպիոնների լիգայի գաւաթակիր, մէկ անգամ՝ Իսպանիայի չեմպիոն եւ երկու անգամ՝ աշխարհի ակումբային չեմպիոն:

«Մանչեսթեր Սիթի» եւ «Չելսի» Անակնկալ Պարտութիւնները

Պրեմիեր լիգայի 18-րդ տուրում չեմպիոն «Մանչեսթեր Սիթին» կրեց երկրորդ պարտութիւնն ընթացիկ առաջնութիւնում: Կատալոնացի Խոսեպ Գվարդիոլայի գլխաւորած թիմն ընդունեց 14-րդ տեղում ընթացող «Քրիսթալ Փելասին» եւ տանուլ տուեց խաղը 2:3 հաշուով:



Սեփական խաղադաշտում պարտութիւն կրեց նաեւ Լոնդոնի «Չելսին», որի մրցակիցն էր «Լեսթեր Սիթին»՝ 9-րդ տեղում է: Հիւրերին յաղթանակ բերեց Զեյնի Վարդիի միակ գոլը՝ 1:0:

«Մանչեսթեր Սիթին» 44 միաւորով երկրորդն է եւ արդէն 4 միաւոր է ետ առաջատար «Լիվերպոլից»։ «Չելսին» ունի 37 միաւոր եւ չորրորդ տեղում է «Տոտենհեմին» գիշերով 5 միաւոր: 37 միաւոր ունի նաեւ «Արսենալը»:

Սուլշերի Նորամուտը Յաղթական էր «Մանչեսթեր Եունայթեդում»՝ 5-:1

Նորուէզացի Ուլէ-Գունար Սուլշերի նորամուտը «Մանչեսթեր Եունայթեդի» գլխաւոր մարզիչի պաշտօնում ստացուեց յաղթական: Անգլիայի առաջնութեան 18-րդ տուրում Մանչեսթերեան թիմը Ուելսում խաղաց «Կարդիֆի» հետ եւ առաւելութեան հասաւ 5:1 հաշուով:

Դուբլի հեղինակ դարձաւ անգլիացի Զէսի Լինգարդը, մրցակցի դարպասը գրաւեցին նաեւ անգլիացի Մարկուս Ռեշֆորդը, իսպանացի Անդրէ Էրբրան եւ ֆրանսիացի Անտուան Մարտիլլը: Երկու գոլային փոխանցում կատարեց ֆրանսիացի Պոլ Պոգբան:

«Մանչեսթեր Եունայթեդը» 29 միաւորով 6-րդ տեղում է 8 միաւոր հետ է 5-րդ տեղում ընթացող «Արսենալից»:

Նախորդ անգամ «Մանչեսթեր Եունայթեդն» Անգլիայի առաջնութեան մէկ խաղում հինգ գոլ խփել էր Ալեքս Ֆերգյուսոնի օրօք՝ 2013թ. Մայիսին 5:5 հաշուով աւարտելով հանդիպումը «Ուեստ Բրոմվիչի» հետ:

Օրամեյանգի Դուբլը Նպաստեց «Արսենալի» Յաղթանակին

Անգլիայի առաջնութեան 18-րդ տուրում Լոնդոնի «Արսենալը» հիւրընկալեց «Բարնլիին» եւ առաւելութեան հասաւ 3:1 հաշուով: Իսպանացի Ունաի Էմերիի գլխաւորած թիմի կազմում դուբլի հեղինակ դարձաւ Գաբրիել յարձակուող Պլեյե-Էմերիկ Օբամեյանգի դուբլը: Աւելացուած ժամանակում էլ աչքի ընկաւ նիգերիացի յարձակուող Ալեքս Իվոբին:



Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը նախորդ խաղում ստացած ոտնաթաթի վնասուածքի հետեւանքով յայտարարուած չէր «Արսենալի» կազմում:

«Ռէալը» Երրորդ Տարին Անընդմէջ Հաջակուեց Աշխարհի Ակումբային Չեմպիոն



Մադրիդի «Ռէալը» երրորդ տարին անընդմէջ նուաճեց աշխարհի ակումբային չեմպիոնի տիտղոսը: Արաբական Միացեալ Էմիրութիւններում անցկացուած մրցաշարի եզրափակիչում արգենտինացի Սանտյագո Սօլարիի գլխաւորած թիմը մրցեց կազմակերպիչ երկրի ներկայացուցիչ «Ալ Ալնի» հետ եւ առաւելութեան հասաւ 4:1 հաշուով:

Աբալական թիմի կազմում աչքի ընկան խորուաթ Լուկայ Մոդրիչն ու իսպանացիներ՝ Մարկոս Լյօրենտէն եւ Սերխիոյ Ռամոսը, գրանցուեց նաեւ ինքնագոլ:

«Ռէալը» դարձաւ աշխարհի ակումբային առաջնութեան քառակի չեմպիոն: Մադրիդեան թիմը նաեւ երեք անգամ նուաճել է Միջմայրցամաքային գաւաթը: